ԵՐԵՍՈՒՆ ԵՒ ԵՐԿՐՈՐԴ ՏԱՐԻ ԹԻՒ 3386 — ՇԱԲԱԹ 19 ՅՈՒՆՎԱՐ 1883 — Ն. Տ. 31 ՅՈՒՆՎԱՐ

ՊԱՅՄԱՆ

Տարեկան գին Կ. Պոլսոյ համար 10 ղրուշ
» » Գաւառաց » 12
Վեցամսեայ » Կ. Պոլսոյ » 5 1/2
» » Գաւառաց » 6 1/2
Ամսական գինը՝ Կ. Պոլսոյ համար 2 1/2 լիրա
Ամսագրի տարբերակը՝ 2 զրշ. մէկ անգամի համար 3 զրշ. երկու անգամի համար 2 զրշ. աւելի անգամներու համար զատ սակարկութիւն կը լինի։

# ՄԱՄՐԻՄ

## ԼՐԱԳԻՐ

30 ՓԱՐԱԶ — ՀԱՆՐԱՊԱՀԱՅՐԵԱՑ — 30 ՓԱՐԱԶ

ՔԱՂԱՔԱԿԱՆ ԱԶԳԱՅԻՆ ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ ԵՒ ՏՆՏԵՍԱԿԱՆ

ՊԱՅՄԱՆ

Դուրս գնացած լրագրաց ճանրոյ ծախքը խմբագրութեան վրայ է։

Լրագրոյս վերաբերեալ նամակ կամ որեւէ գրութիւն խմբագիր—Տնօրէնին պիտի ուղղուի. Կ. Պոլիս Բիդա փաշա եօթանցը, Նարդ Զարշըմը թիւ 33 Մաթիսի գրատունը։

Ճանրու ծախքը չվճարուած նամակ չընդունուիր։

Զտպուած նամակ, յօդուած, եւայլն ետ չեն տրուիր։

### ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹԻՒՆ

Խառն. — Հեռագրական.— Ազգային լուրեր. — Էջմիածնայ վերջին անցքերը։ — Թուրքիա, Ռուսիա, Ներսէս Պատրիարք եւ Հայոց ազգը (նամակ ի Մոսկուայէ) Շար. եւ վերջ.—Մակար արքեպիսկոպոս Առաջնորդ Պեռարապիոյ—Մանկունի եպիսկոպոսի հարցաւորութիւնը։ — Թղթակցութիւն ի Փոքր Ասիոյ, (Եօզղատ)։ — Թերթօն Մասիսի։

### Կ. ՊՈԼԻՍ 19 ՅՈՒՆՎԱՐ

### ՀԵՌԱԳՐԱԿԱՆ ԼՈՒՐԵՐ

Փարիզ 20 յունվ.

Իշխանազանց արտաքսման վերաբերեալ Պ. Ֆէրէի առաջարկը քննող յանձնախմբին տեղեկարերն իւր տեղեկագիրը յանձնեց։

Նախարարապետ Պ. Ֆայիէր յայտարարեց թէ նախարարութիւնը Պ. Ֆլոքէի առաջարկն անմիջապէս վիճաբանութեան ենթարկելու պատրաստ է։

Պոնարարդեան երեսփոխանը առաջարկեցին վիճաբանութիւնն յետաձգել մինչեւ ցանուանումն պատերազմական գործոց նախարարին։

Երեսփոխանական ժողովը մերժեց զայս առաջարկ եւ որոշեց որ վիճաբանութիւնն անմիջապէս տեղի ունենար

Վիճաբանութիւնն սկսաւ, վաղը պիտի շարունակուի։

Փարիզ 30 յունվ.

Յունվ. 30 թուով ծանուցագրի մը մէջ Լորտ Կրանվիլ կը Ջանայ Եգիպտոսի երմտական հսկողութեան Ջնջումն արդարացնել, եւ կը յարէ թէ Անգլիա Ֆրանսայի գործակցութիւնը կը յուսայ։

Փարիզ 30 յունվ.

Երեսփոխանական ժողովոյ մէջ Պ. Ֆլոքէի առաջարկին վիճաբանութիւնը շարունակեցաւ այսօր։

Պ. Լէոն Ռիսոլթ առաջադրեալ տընօրինութեանց դէմ խօսեցաւ։

Նախարարապետ Պ. Ֆայիէր պաշտպանեց զանոնք. բայց յոգնութիւնն ստիպեց զինք ընդհատել իւր ճառն եւ խնդրել որ վիճաբանութիւնն հինգշաբթի աւուր թողուի։

Նիսատէն յետոյ Պ. Ֆայիէր նուագեցաւ։ Կը յուսացուի որ ցաւալի հետեւանք չպիտի ունենայ եւ պիտի կրնայ ներկայ գտնուիլ հինգշաբթի աւուր նստին։

Հռոմ 29 յունվ.

Կ. Պոլսոյ Պապական պատուիրակ Մոնսէնիէօր Պոմէլլի փետրվար ամսոյ սկիզբն իւր պաշտօնավայրը պիտի ուղեւորի։

### ԽԱՌՆ ԼՈՒՐԵՐ

Վեհ. Սուլթանն արտաքին դործոց նախարարութեան Թղթակցութեան դիւանին տնօրէն Ըֆֆէթ պէյին Ա. կարգի Մէճիտիէ և կայսերական պատան կոչակարարպետ Պ. Եորկիին Դ. կարգի Մէճիտիէ պատուանշան շնորհեց։

Վիէննայի Օսմ. դեսպան Բարձր. Լահէմ փաշային Կ. Պոլիս հասած լինելուն լուրը, զոր Սթամպուլ լրագրէն առնլով հրատարակած է, կանխահաս է։ Նորին բարձրութիւնը Դանուբի նաւարկութեան սառոյցներէ արդիլուելուն պատճառաւ ճուրճովա մնացած է եղեր, բայց երեկ նաւարկութիւնը բացուելով, կը յուսացուի որ վաղնա հասած լինի, և այսօր կամ վաղը Կ Պոլիս հասնի։

Ինչպէս երեկ ալ կը հաստատէինք Բ. Դրան մէկ հերքողական հեռագրին առթիւ, ցոյց տալու համար ընթերցողաց թէ Կ. Պոլիսէն ո՛րքան չափազանցեալ կամ ստայօդ տեղեկութիւնք կը հաղորդուին Եւրոպական լրագրաց, կը թարգմանենք սա հեռագիրը, զոր վերջին թղթաբերով առնուած քանի մը Անգլիական թերթերու մէջ տեսած ենք.—

Վիէննա 18 յունվ.—«Հայաստանի մէջ տիրող յուզման նկատմամբ առնուած նորագոյն տեղեկութեանց նայելով, այդ դաւառին ամբողջ վերին մասն ապարէզ դարձած է զինեալ հրոսակներոյ, և ապստամբութիւն մը կը պատրաստուի դէպ ի դարուն։ Հայոց Պատրիարք Ներսէս Սրբազան, Բ. Դրան խնդրանաց համեմատ, հովուական մ՚ուղղեց իւր ժողովրդեան, խոստանալով թէ բարենորոգմունք ի մօտոյ պիտի գործադրուին, և կը կարծուի թէ երօք Օսմ. կառավարութիւնը մտադիր է վերջապէս գործադրել երկար ժամանակէ ի վեր խոստացուած բարենորոգումները։ Քիւրտիստանի (Տիարպէքիրի ըսել կ՚ուզէ) կուսակալն, որոյ անկարողութիւնն հանրածանօթ է և բաղում՝ չարիք պատճառած էր, վերջերս պաշտօնէն եղաւ։ Տէրվիշ փաշա Հայաստան պիտի ղրկուէր հոն ծագած շարժումը խաղաղեցնելու համար, բայց վախցուեցաւ թէ չափազանց խստութիւն ցոյց կուտայ, և գործոյ յուեղոյն ընթացք մը ստանալուն պատճառ կը լինի։ Բազմաթիւ բանտարկեալք, ընդ օրս քանի մը հարուստ վաճառականք, վերջերս Կ. Պոլիս եկան կարծեմ, և դաւառական բանտերը դատեցեցան»։

Հակառակ այս տեղեկութեանց, մեր ընթերցողք դիտեն թէ այսօր կարծեմ խնդիրը վերջացած է։ Լէբէբ՝ այլ իւր երեկի թուով կը ծանուցանէր թէ ձերբակալելոյ միայն մէկ քանին յանցաւոր գտնուած են «Հայաստանի մէջ Ռուսիոյ շահուց գործիք լինելնուն համար»։

Իրաւաբանական վարժարանին դասախօսութիւններն յառաջիկայ շաբաթ օրը պիտի վերսկսին։

Բ. Դուռը, կ՚ըսէ Մէմորիալ Տիբլոմաթիք, Դանուբի խնդրոյն մէջ Անգլիական աշխարհավարութեան պիտի մերձենայ։ Պակաս ճիշդ և բացորոշ հրահանգներ չեն ղրկուած տակաւին մայրաքաղաքէս ի Լոնտրա։ Օսմ. կառավարութիւնը, կը յարէ յիշեալ լրագիրը, քանի մը խնդրոյ վրայ կը խորհրդակցի որք Դանուբի նաւարկութեան խնդրոյն վերաբերելով հանդերձ Պերլինի դաշնագրին այն քանի մը պայմանաց հետ ալ առնչութիւն ունին, որք դեռ անգործադրելի կը մնան։

Պերլինէն քաշուած հեռագիր մը կը ծանուցանէ թէ Եւրոպական մեծ մայրաքաղաքաց մէջ դտնուող Ֆըրանսական դիւանագէտք այս միջոցիս ջանքեր կ՚ընեն եղեր մեծ տէրութիւններն համոզելու որ Լորտ Կրանվիլի մեր երեկի թուով թարգմանած ծանուցագրոյն առաջարկները անդոհացուցիչ և անընդունելի համարին։

Թայմսին փարիզի թղթակիցը կը կը հերքէ այն լուրը թէ Բ. Դուռը Ֆրանսայի յորդորներուն հետեւելով, հաւանութիւն չպիտի տայ եղեր Լորտ Կրանվիլի չրջաբերականին,

Պուլկարիոյ մէջ այս միջոցիս մասնաւոր ջանքեր կը լինին Արեւելեան Ռումէլիի Պուլկարիոյ հետ միացումը փութացնելու համար։ Ինէն (Միութիւն) անուամբ Ֆրանքոֆիլ Պուլկար թերթ մը սկսած է հրատարակուիլ Սոֆիայի մէջ, Պուլկարիոյ Ռուս նախարարապետ Սպաւլէֆ զօրավարին դրամական օգնութեամբ։ Այս լրագիր կը քարոզէ թէ «Արեւելեան Ռումէլիցիք պէտք «չէ մոռնան թէ Ռումանիա Սերպիա «Գարատաղ և Պուլկարիա Ռուսիա «յէն ստացած են իրենց ազատա«գրութիւնն, և թէ երբ Հարա«ւային Պուլկարք (Արեւելեան Ռու«մէլիցիք) միութեան դրոշը պարա«զեն, Ռուս բանակներ անոնց օգ«նութեան պիտի փութան, և վախ«նալու բան մը չպիտի ունենան ո՛չ «Բ. Դռնէն, ո՛չ ալ տէրութիւննե«րէն։»

Միւս կողմէ, կը ծանուցուի թէ Արեւելեան Ռումէլիի Պուլկար ժողովրդեան մէջ բաղմաթիւ գործակալք կը շրջին, ժողովուրդը զինուորելու և Բ. Դրան դէմ ապստամբութիւն հանելով Պուլկարիոյ հետ միացման մղելու համար։ Սոֆիայէն Եւրոպական լրագրաց հեռագրեալ ծանրակշիռ լուր մ՚այդ գործակալաց ձեռք գեղեցիկ պատրուակ եղած է Արեւելեան Ռումէլիի ժողովուրդը գրգռելու համար։ Աւասիկ յիշեալ հեռագիրն։

«Արեւելեան Ռումէլիէն եկած լուրեր կը հաստատեն թէ Հռոդոպէրանց Իսլամ—Բօմաք ժողովուրդն ի մօտոյ ապստամբեցնելու համար պատրաստութիւնք կը լինին։ Կ. Պոլսոյ «Երիտասարդ Թուրքաց» (Ժէօն Թիւրք) մանախմբին կողմէ Արեւելեան Ռումէլիի այս իսլամ բնակչաց բամնուելու համար փիլիպէլի մանախմբին ղրկուած երկու անտուկ Մարթինի—Հէնրի հրացանք Արեւելեան Ռումէլիի կառավարութեան կողմէ գրաւուած են։ Օսմանեան զօրք հանախմբուած է Արեւելեան Ռումէլիի սահմանագլխին վրայ։ Գաւառին Քրիստոնեայ ժողովուրդն երկիւղի մէջ լինելով ինքնապաշտպանութեան կը պատրաստուի, ըստ որում ծանր խռովութիւնք կը գուշակուին։»

Ինչպէս այս հեռագրէն կ՚իմացուի, իբր թէ Կ. Պոլսոյ մէջ հայրենասէր Թուրք կուսակցութիւն մը կ՚աշխատի եղեր Արեւելեան Ռումէլիի Իսլամ ժողովուրդը Պուլկար ժողովրդեան դէմ յարուցանել, որպէս զի Օսմանեան զօրքը միջամտելու իրաւունք ունենայ, և Արեւելեան Ռումէլի ուղղակէս Օսմանեան իշխանութեան ներքեւ իյնայ։ Լէ«էբէբ» և Վաքթ կը յայտարարեն թէ այս ամէն զրոյցք դիտմամբ կը շինուին և կը տարածուին՝ Պուլկարաց և Իսլամաց միջեւ բարեկամական յարաբերութեանց հաստատումն արգիլելու և Պուլկարները գրգռելու համար։ Լէ«էբէբ» կը գուշակէ որ եթէ այսպէս երթայ, շատ չանցած տագնապալից խնդիր մը պիտի ծագի Պալքանեան թերակղզոյ մէջ։

Մէմորիալ Տիբլոմաթիք լրագրոյն խօսքին նայելով, Եւրոպիոյ երկրորդական տէրութիւնք՝ մեծ տէրութեանց կողմէ դումարեալ ամեն դեսպանախորհրդոյ կամ վեհաժողովոյ մէջ հաւասական ներկայացուցիչ մ՚ունենալու մասին իրենց մէջ համաձայնութեան մը հիմերն որոշելու նպատակաւ դեսպանախորհուրդ մը պիտի գումարեն եղեր։ Սպանիա միայն դուրս կը մնայ եղեր այս շարժումէն. Պելճիա, Ցանիմարքա, Հոլանտա, Բորթուկալ և Շուէտ կը մասնակցին եղեր այս շարժման։

Կիրակի իրիկուն Ֆընարգլըի կողմը գող մը Թուրքի մ՚ապարանքը մնած և քանի մը ծրար գոյք առնլով դուրս ելնելու վրայ էր, երբ պահակախումբը վրայ հասնելով բռնուեցաւ։ Գողը գաղթական մ՚էր։

Ուրիշ գող մ՚ալ նախընթաց օրը Թարապիոյ մէջ սրճարան մը կողոպտեց։ Բայց հետեւեալ առաւօտ բռնուեցաւ։

Թերճէմանի Հայդարպաշի կը ծանուցանէ թէ Ֆաթիհի կողմերը ծածուկ դինետուններ հաստատուած լինելով օտարականութիւնը զանոնք կոխեր և փակել տուեր է։

Նոյն լրագիրն՝ հանրային կրթական նախարարութեան ուղղակի հսկողութեան ներքեւ չգտնուող վարժարանաց մէջ Օսմ. կառավարութեան շահուց միանակարգ դասագրքեր դտնուիլը ծանուցանելով կը հրաւիրէ հանրային կրթական նախարարութիւնն, որ մէկ մէկ քննիչ ղրկէ գաւառները, մանաւանդ Արշիպեղագոսի կղզիները՝ յունական վարժարանները քննելու ծամար։

Բ. Դուռը տակաւին չպատասխանեց Եգիպտոսի վերաբերեալ Անգլիական ծանուցագրին, ոչ ալ Դանուբի դեսպանախորհրդին վերաբերեալ ծանուցագրին։ Բ. Դուռն ոչ եւս պիտի յապաղէ այս վերջին ծանուցագրին պատասխանը, ըստ որում ապահովութիւն ստացեր է Անգլիական կառավարութենէն թէ Լոնտրա գումարուելիք դեսպանախորհուրդը Դանուբի նաւարկութեան խնդրէն զատ ուրիշ խնդրոց վրայ չպիտի խորհրդակցի։

Վիէննայէն Անգլիական Սթանտարտ լրագրին ուղղեալ հեռագրի մը նայելով՝ այդ մայրաքաղաքին մէջ կը կարծուի թէ Օսմ. կառավարութիւնը պիտի պնդէ որպէս զի վարչական, դատական կամ դիւանադիտական որ և է փոփոխութիւն տեղի չունենայ Եգիպտոսի մէջ առանց կանխաւ իւր հաւանութիւնն ստանալու։

Գալով Սուէյշի ջրանցքին նաւարկութեան, Բ. Դուռն Եւրոպական վեհաժողովոյ մը գումարումը պիտի խնդրէ եղեր այս խնդիրը վերջնապէս կարգադրելու համար։

Սերբիոյ գաւառին մէջ Քամարխանի կայսերական ագարակը վեհ. Սուլթանին հրամանաւ գաղթականաց բնակութեան յատկացաւ, և զատ գիւղ մը պիտի լինի Սելիմիյէ անուամբ, յանուն անդրանիկ որդւոյ վեհ. Սուլթանին։

Արեւելեան Ռումէլիի Ֆիլիբոբոլի լրագիրը ցաւով սրտի կը ծանուցանէ թէ այս տարի Ծնունդին առաւօտուն Փիլիպէի Պուլղարաց եպիսկոպոսը մեծ հանդիսիւ Մարիցա գետին եղրն երթալով խաչը գետը նետեր է, բայց հոսանքին բռնութենէն խաչն անհետ եղեր և ամեն ջանից հակառակ չէ կրցեր գտնուիլ։

Այս դժբաղդութիւն, որ նախընթաց տարին ալ պատահած էր յոյժ տխուր տպաւորութիւն մ՚ըներ է քաղաքին Պուլղար ժողովրդեան վրայ, իբրեւ չարագուշակ դեպք։

Վիէննայէն կը դրեն թէ Լոնտրա դումարուելիք դեսպանախորհրդին մէջ Ռումանիոյ և Սերպիոյ ներկայացուցիչ ունենալու խնդիրը դեսպանախորհրդոյ առաջին նստին մէջ պիտի որոշուի։ Աւստրիա Եւրոպական յանձնախմբին պաշտօնավարութեան առժամանակեայ երկարաձգման հաւանութիւն չպիտի տայ եղեր։ Եթէ Պարէրի ծրագիրը չընդունուի, դեսպանախորհուրդն ապարդիւն պիտի լինի։

Քաղաքապետութիւնը պաշտօնապէս կը ծանուցանէ թէ մայրաքաղաքիս այլ և այլ թաղերուն մէջ թաղապետական բժշկաց ձեռամբ ձրի պատուաստեալ ողջոյց թիւը վերջին 15 աւուրց մէջ 329ի կը հասնի։ Մինչև յայսօր պատուաստեալ ողջոյց թիւը 1685ի հասած է։

Պատուաստի գործողութիւնը կը շարունակէ։

Զաղբթ կը ծանուցանէ թէ Մեծ կղզին բնակեալ Եաղբճի Բանայոթաքիին որդին՝ Մուրատեան Պողոս էֆէնտիի տան և հինգ տարեկան աղջիկն երկուշաբթի գիշեր ժամը 4ին միջոցներն առեւանգելով փախեր է, իրենց հետ տանելով քանի մը կտոր գոհարեղէն և այլ գոյք։

Նեոլոգոս լրագիրը կ՚ըսէ թէ Կ. Պոլսոյ ջուրի ընկերութիւնն աճուրդի դրած էր երկու ջրամբարներու շինութիւնը, մին Ֆերի գիւղի և միւսը Շիշլիի մէջ։ Ընկերութիւնը մտադիր է նմանօրինակ ուրիշ քանի մը շինութիւններ ալ ընել, որոց ամբողջ դումարն 5-6 միլիոն ֆրանքի պիտի հասնի։

Թէհէմանը Հագիգաթ կը ծանուցանէ թէ Բերայի Ջ. շրջանակի թաղապետութիւնը տարւոյս մէջ մտադիր է քանի մը կարեւոր շինութեանց ձեռնարկել, ի մէջ այլոց կառուցի մը շինել Թոփհանէէն մինչեւ Բերա։

Նախընթաց գիշեր Գասըմ փաշայի կողմը դատարկաշրջիկ Պարսիկ մը դանակով ինքզինք ծանրապէս վիրաւորեց։ Ոստիկանութիւնը թաղապետական հիւանդանոցը փոխադրել տուաւ զայն։

Վէզիր խանը բնակեալ Յարութիւն անուն կոշկակար մը երէկ գիշեր իւր խաչիկ անուն աշկերտը դանակով ձախ զիստէն վիրաւորեց և փախաւ. բայց ոստիկանութիւնն երկու ժամ վերջը յաջողեցաւ բռնել զայն։

Հռոմէն յունվ. 9/21 թուով լուր կուգան թէ Հռոմի մէջ պատրաստուած գեղարուեստից ցուցասրահանդէսը բացուեր է։ Այս առաջին միջազգային արուեստահանդէսն է որ կը բացուի Հռոմի մէջ Իտալիոյ մայրաքաղաք լինելէն ի վեր։

Եւրոպական լրագիրք դրատաեաց յօդուածներ կը նուիրեն այս արուեստահանդէսին, որ նոր մղում մը պիտի տայ անուշտ Իտալական գեղարուեստից, և անոնց վաղեմի փառքը թերեւս կենդանացնէ։

Օտէսայի նաւահանգիստը վերստին սառելով՝ նաւարկութիւնը կերակի առաւօտէն ի վեր դադրած է։

### ԱԶԳԱՅԻՆ ԼՈՒՐԵՐ

Կը լսենք թէ Ցնտեսական գործոց խորհրդական Սեթեան Միհրան էֆէնտի նախորդ Վարչութեան երմտական հաշուոց քննութեան ձեռնարկած է։ Յայտնի է թէ այդ հաշուոց մասին անհաճոյ զրոյցներ տարածուած էին, մանաւանդ Մէլիքեան Գարեգին էֆէնտիի և Պէրխուտար էֆէնտիի պաշտօնավարութեան միջոցին, և անկէ ետքը։ Միհրան էֆէնտի գործի գործ մը կատարած կը լինի, եթէ այս հաշիւները մաքրէ և Ազգին ճիշդ գաղափար մը տայ Պարիզաքարանի երմտական կացութեան վրայ։

Ուսումնական խորհրդոյ Ե. նիստն երէկ տեղի ունեցաւ ժամ 9ին.

1. Սերաստիոյ Լուսաբեր ընկերութեան կանոնագիրն՝ որ ներկայացեալ էր՝ վաւերացաւ։

2. Պայազիտի Առաջնորդը տեղւոյն Ազգ. վարժարանաց կարօտ վիճակն նկարագրած և նպաստ խնդրած լինելով, գրուեցաւ Ասիական ընկերութեան, որ արդէն խոստացած նպաստն յղէ։

3. կուտինայի Դեր. Առաջնորդը տեղւոյն ազգայնոց և հետեւաբար վարժարանաց կարօտ վիճակն յայտնած և Պատրիարքարանի գթութիւնն հայցած լինելով, որոշուեցաւ գրել թէ կեդրոնը չկրնար օգնել, և պէտք է ամէն ջանք ի գործ դնել դպրոցը բարեկարգելու, և յորդորել ժողովուրդն որ իւր մանկաւոյն կրթութեանն համար հարկ եղած պէտքերն հոգայ։

4. Ազգ. վարժարանաց վիճակագրութեան մասին որոշուած շրջաբերականն և հարցադիրն պատրաստուած լինելով, կարդացուեցաւ և որոշուեցաւ տպագրութեան յանձնել։

«Կրթական առաքելութեան» զոհերը կը պատմեն թէ Պ. Ա. Այվազեան հարմնիքէ հարմնիք և յուզարկաւորութենէ յուզարկաւորութիւն շրջեցուցեր է զիրենք, շահագիտական նպատակաւ, և բաւական կլոբիկ գումար մը ձեռք բերեր է այսպիսի միջոցներով։ «Կրթական դեսպան»ն իրեն չը հնազանդող մանուկները ֆոլիոյէ կը բռնէ և սաստիկ կը գանակոծէ եղեր։ Ցփղիսէն էջմիածին տարուած ատեն, տղայք բաց կառքերով փոխադրուելով տեղացող առատ ձիւնին տակ անպատսպար մնացեր են, և իրենց հիւանդացած ընկերները մէջերնին առնելով իրենց մարմնովը ծածկեր և իրենց շունչովը տաքցուցեր են զանոնք։ Ցփղիս մնացած աշակերտը հիւանդութեան պատճառաւ չէ կրցեր ճամբորդել և վար դրուեր է. էջմիածին մնացողներէն ոմանք ալ հիւանդ են եղեր և դարձեան պիտի փութան հոս վերադառնալ։ Պ. Ա. Այվազեան մայրաքաղաքէս երեք նամակ դրելով տղայոց, յայտներ է թէ լրագիրը իրեն դէմ կը գրեն և խնդրեր է որ, երբ հոս վերադառնան, գովեն և պաշտպանեն զինքը։ Ցղայք որոշեր են Պատրիարքարան երթալով թէ այդ նամակներն և թէ Ա. Այվազեանի չարագործութեանց դէմ բողոքխառն տեղեկագիր մը մատուցանել Ս. Պատրիարք Հօր և հատուցում և արդարութիւն պահանջել։ Պատրիզակցի աղքատ կին մը, որ իւր բոլոր գոյքը ծախելով՝ ստակը Ա. Այվազեանին յանձներ էր իւր զաւկին հետ և ինք տան մէջ մէկ սպասաւորութեան մներ էր, այժմ տղուն վերադարձը տեսնելով, և ոչ կերակրոյ անօթ մը, ոչ ալ զայն պատսպարելու համար անկոպեկ մը մնացած լինելով իրեն, ստիպուեր է Ազգ. Հիւանդանոցին բնակիլ զայն։ Ուրիշ մը, կոմկոսական յառաջիկայ ընտրութեան նը կատմամբ Սինոդին գաղափարաց և որոշմանց վրայ։

Ընթերցողաց մասնաւոր ուշադրութիւնը կը հրաւիրենք Ռուսահայ աշխատակցի մը Ցփղիսէն մեզ ղրկած մէկ գրութեան վրայ, որ կարեւոր տեղեկութիւններ կը պարունակէ էջմիածնի վերջին անցից վրայ, ինչպէս նաեւ Կաթողիկոսական յառաջիկայ ընտրութեան նը կատմամբ Սինոդին գաղափարաց և որոշմանց վրայ։

## ԷՋՄԻԱԾՆԱՑ ՎԵՐՋԻՆ ԱՆՑՔԵՐՆ

—•—

(Ռուսահայ աշխատակցի մը կողմէ.)

——

Գրեցինք անցեալ չաբթու թէ Ռուսիոյ կառավարութիւնը հեռադրեր էր Սինոդին և Բրօկուրորին թէ նոր կաթողիկոսի ընտրութիւնը փութացնեն։ Սինոդը իւր վերջին նիստերէն միոյն մէջ 28 դեկտ. տէրութեան սոյն առաջարկութիւնը ի նկատ առնելով օրագրութիւն (որոշմագիր) կազմեր է, յորում՝ կ'իմանամք թէ նորոդ ընտրութեան ժամանակ նշանակեր է 1884 մայիս ամսուան 27րդ օրը, և այսքան յապազման պատճառն ալ բացատրեր է ընտրական գործողութեանց համար առ այժմ պատրաստ դրամ չունենալնին։ Մինչդեռ Սինօդը ներկայ անհրաժեշտ ծախսուց համար փոխանակ Աժռուային ապառիկ և յետաձգեալ հասոյթներն հաւաքելով գործածելու, որք հազար ռուբլիէն աւելի կըլլան, ընդհակառակն Գէորգ հանգուցեալ կաթուղիկոսի օրով վաղուց ի վեր գանձարանը պահեստի կեցած 900ի չափ Բօլ Էմբէրիալ և 100 Օսմ. ոսկւոյ չափ գումարը, ինչպէս նաեւ 300 հազար ռուբլինոցի չափ արժողութեամբ տոկոսաւոր արժեթղթոց կտրոնները կտրելով և դուրս հանելով գանձարանէն՝ ծախսելու վրայ են այսօր, այն ինչ հարիւր թէ մի ամիս անցած է կաթողիկոսի վախճանման վրայ։

Այս իրական դէպքը բաւական է ապացուցանելու թէ՝ Սինօդը, որ այսօր Մայր Աթոռոյ միակ հոգեւոր ծայրագոյն իշխանութիւնը կը ներկայացնէ, ո՛ր աստիճան տնտեսագիտական հանճար և հմտութիւն մ'ունեցած կը լինի, և ի՞նչ երաշխաւորութիւն կայ որ 2 տարիէն յետոյ ընտրական գործողութեանց համար հարկ եղած այդ աւելորդ գումարը պիտի կարենայ գոյացնել և յարդիւնս ածել, մինչդեռ այժմէն իսկ ամեն ինչ ցոյց կ'տան թէ՝ 1 1/2 տարի չանցած, Գէորգ կաթողիկոսի ժողված ու գանձարանը պահեստի դրած 350 հազար ռուբլիի արժեթղթերէն մի հատ ալ չպիտի մնայ այս ընթացքով, և նորեկ կաթուղիկոսը թափուր վիճակներու մէջ և դատարկ գանձատան վրայ պիտի հաստատէ ու բազմի իւր դահը։

Բաց ասոնցմէ կ'իմանամք թէ Սինօդն այժմ մի ուրիշ մտածմունքով ալ զբաղեալ է. թերեւս այն ալ բնօկուրորին կամ կառավարութեան թելադրութեամբը։ Տեսնելով որ կաթուղիկոսական ընտրութեան մէջ Ռուսահայ եկեղեցին և Սինօդը հանդերձ միաբանութեամբ, Հնդկահայ և Պարսկահայ եկեղեցեաց հետ ի միասին ընդ ամենը 31 ձայն և քուէ ունին, մինչդեռ տաճկահայ եկեղեցին ունի հաւաքական 120 ձայն, որով ընտրութեան վճռատու քուէն այս ընթացքով միշտ Ցաճկահայոց քով կը մնայ, այն ինչ Ռուսահայք խպառ իրենցմէ հեռացնելու վարել կը նային զՑաճկահայս, ուստի թէ՝ Ցաճկահայոց վիճակային քուէից թիւը չափաւորելու, և թէ՝ Ռուսահայ վիճակաց ալ քուէից թիւը բազմացնելու միջոցներ սկսած են փորձել, Ռուսահայոց մէն մի առաջնորդական վիճակը, (որք 6 են ընդ ամենը և ըստուգիւ ալ ամեն մին ահագին ընդարձակութիւն ունի, այնպէս որ մինը Թուրքիոյ առաջնորդական 4 կամ 5 վիճակաց ընդարձակութեանը և հայաշատութեանը կը հաւասարի,) 4 կամ 5ական յաջորդութեանց (քարոզչական թեմերու) բաժնելով և իւրաքանչիւր յաջորդութեան ալ երկերկու քուէ յատկացնելով, այնպէս ղի մի առաջնորդական վիճակը փոխանակ 2 քուէի ունենայ 10—12 ձայն։ Միւս կողմանէ ալ Թրքահայոց ձայները նըւազեցնելու համար կը մտադրուին առարկել թէ Թրքահայոց կողմանէ ղրկուելիք պատուիրակներն ելեւմտական հարստութիւն չպէտք է ունենան Սոյ կաթողիկոսական թեմին մէջ գտնուող վիճակաց համար ալ քուէ տալու, ղի այդ վիճակները կը մերժեն ճանչնալ Մայր Աթոռոյ ընդհանրական կաթողիկոսը, ուստի և իրաւունք չունին նորա ընտրութեանը մասնակցելու. հետեւապէս Թրքահայ պատուիրակաց տալիք քուէից թիւէն ալ 25—30 ձայն կ'ուզեն զեղչել։ Ատանա, Ուրֆա, Եօզգատ, Սեբաստիա և այլ Սոյ թեմին հարուած վիճակներն ի բաց մերժելով։ Այս կերպիւ Սինօդն և Ռուսահայք բազմացնելով իրենց քուէից ձայներն. կ'զեն որ Ցաճկահայոց քուէից ձայներն խեղդեն և իրենց մէջէն ընտրեն նոր կաթուղիկոսը, որոյ համար արդէն իրենց ընտրելի նշանակեր են, կ'ըսուի, Պեսարապիոյ Մակար Աղքեպիսկոպոսը, կաթողիկոսական Տեղապահ Մկրտիչ Աղքեպիսկոպոսը, Ադէքսանդրաբօլի յաջորդ (քարոզիչ) Յուսիկ վարդապետը և Նուխիի յաջորդ Սարգիս վարդապետը։ Այս վերջին երեքն անոր համար կը յիշեմք, ցոյց տալու համար թէ կաթուղիկոսն իրենք իրենց մէջէն ընտրելու տեսնչ ու ցանկութիւնը մինչեւ ո՛ր աստիճան անյուսալի ընտրելեաց ցանկի մը կը տանի կը հասցնէ զիրենք։ Ցեսնենք թէ Սինոդն և Ռուսահայք ինչքա՞ն պիտի յաջողին իրենց սոյն մտադրութեանը մէջ, հաւատալով նոքա թերեւս թէ՝ Ցաճկահայք այդ մասին մեքենական անտարբերութիւն մը պիտի պահեն։

* * *

Կաթողիկոսական ընտրելի նշանակեալ սոյն չորս անձանց մէջ վերջինն՝ այն է Սարգիս վարդապետ ըստուածը մանաւոր յիշատակութեան արժանի է։ Սա 1876 ին միջոցները, Պեսարապիոյ առաջնորդական փոխանորդ՝ միանգամայն և Քիշնեւի աթոռապատկան կալուածոց վերատեսուչը լինելով, այն ժամանակ բացուած քննութեան մէջ, յիշեալ կալուածոց չինութիւնները, նորոգութիւններէն, եկամուտներէն և կապալատուութենէն 14,000 ռուբլիի նենգութիւն մը գործած լինելու ամբաստանութեան կ'ենթարկուի, ուստի և կրկնապատիկը 28,000 ռուբլի Աթոռին տուժելու կը դատապարտուի, և առ ի չգոյէ դրամի՝ վերջին մի քանի տարիներս Սեւանայ վանքը կը ղըրկուի յապաշխարութիւն։ Իւր բոլոր պաշտօններէն ալ զրկուելով։ Իւր ազգականը, բժիշկ Տ. Գասպարեանց, շատ կը բարեխօսէ Մանկունիի միջոցաւ որ կաթողիկոսը նեղում չնորհէ նմա, բայց չյաջողիր, մինչեւ որ հանգուցեալ Անդրէաս Աղքեպիսկոպոս՝ 1881 սեպտեմբերի վերջերն ի Շուշի առաջնորդ երթալուն առթիւն աղաչելով՝ անձամբ կը խնդրէ կաթողիկոսէն որ նեղում չնորհելով նմա՝ թող տայ իրեն հետ դայն Ղարապաղ տանելու. կաթողիկոսն ալ ներելով նմա, այն պայմանաւ որ եթէ դրամ ուներ՝ անպատճառ այն 14,000 ռուբլիի գումարը տուժէ, թող կը տայ երթալու, և անդ Նուխիի Առաջնորդական փոխանորդ կամ յաջորդ կը կարգուի։ Այժմ կաթողիկոսին մահուանը վրայ, Սարգիս վարդապետի մերձաւոր ազգական՝ Վաղարշապատի քաղաքային բժիշկ Եփրեմ Տ. Գասպարեանց ալ, կառավարութեան և Բրօկուրորի նըշանակելովը, կաթողիկոսի գոյից կարծեցեալ յափշտակութեան դորձոյն քննիչ յանձնաժողովոյ դործողանդամը եղած լինելով, սորա շընորհիւ յիշեալ Սարգիս վարդապետը դեկտ. 27ին մեծաշուք փառքով Էջմիածին հրաւիրուեր ու բերուեր է՝ կաթողիկոսական վեհարանն իւր բոլոր դոյքերովը նորա հսկողութեանն ու պահպանութեանը յանձնելու համար մինչեւ նորընտիր կաթողիկոսին դալուստը։ Ընթերցողաց կը մնայ դատել թէ Էջմիածնայ այժմու դործող եկեղեցականաց մէջ հաւատարմութեան և փառասիրութեան արժանիքը մինչեւ ո՛ւր է քաշուած։

* * *

Կառավարութեան հրամանաւը և Բրօկուրորի կարգադրութեամբը Սինօդին կազմած քննիչ յանձնաժողովն իւր խուզարկութիւնները կը շարունակէ՝ որպէս թէ կաթողիկոսին գողցուած կարծեցեալ դրամոց հետքը գտնելու համար, իսկ ամբողջ տասն օր թէ՝ վաղարշապատին մէջ և թէ՝ շրջակայ գիւղօրայքը կասկածելի համարած տները կոխելով ըրած խուզարկութիւններէն յետոյ, յիշեալ տանց մէջ դրամի հոտն անգամ չգտնելով, առ հասարակ ձեռքն անցած իրեղէնները, օրինակի համար՝ թէ՝ ի պ«ֆն գգալներ, մետաքսէ թաշկինակներ, թաւշի և դիպակի կտորներ, թաղիքի կտորտանք, հին կապերտներ (խալիչա), ասունեղ գործ հողաթափներ, հին ու մաշուած աթոռաք և թիկնաթոռաք, քանարէներ, սքարմանչէթի մտեր, մեղրամոմի ճրագներ, զմելիներ, զենչակներ, վեհափառի լուսանկար պատկերներ, և այլ այսպիսի հնչին և անհնչան նիւթեր իբրեւ գողօն բռներ վանքը բերեր է, որոց տէրերը սակայն բարձրաձայն կը բողբոջեն և կը պնդեն եղեր թէ այդ գրաւեալ նիւթերն բուն իրենց անձնական սեփականութիւնն են, զորս կարող են հաստատել։ Եվթադրելով իսկ թէ սոքա գողուելի ալ եղած լինին, կաթուղիկոսին սեփական դոյքերը կամ մօտի գործածած իրեղէններն չեն համարուիր, որոց ամենքն 100 ռուբլիի արժէք չունին, մինչդեռ այդ յանձնաժողովը՝ կաթուղիկոսէն գողացեալ կարծուած 1 1/2 միլիոն ռուբլիի արժողութեամբ թաղթ կամ ոսկի դրամը գտնելու յուսով և հաւատքով կազմուած կամ կազմել տրըուած էր, որն որ տասն օր չարաչար աշխատելէ յետոյ՝ հաղիւ սորա կամ նորա անձնական դոյքերն իբրեւ գողօն համարելով 100 ռուբլիի արժողութեամբ նիւթ դրուած է։

Սակայն յանձնաժողովն իւր այդ խուզարկութիւններովն ո՛չ այնքան էջմիածնայ օգուտ բերած է, որքան անհատական մեծամեծ վնասներու պատճառ և առիթ եղած է։ Օրինակի համար՝ դեկտ. 23ին անձի մը տունը յանկարծ կոխելով 8-10 հոգի մէկանց, որոց մէջ կը դրտնուէին Սինօդական և աւագ լուսարար Երեմիա եպիսկոպոս, Գայիանէի վանահայր Արիստակէս եպիսկոպոս (որ կը լսեմք թէ հրաժարեր է այդ քննիչութեան պաշտօնէն՝ զայդ անարժան համարելով իրեն), ձեմարանի հայկաբանութեան դասատու կիւրեղ վարդապետ Սրապեան, ձեմարանի փիլիսոփայութեան դասատու և մանկարարժ և վերջին Ուսուցչական ժողովոյ ատենապետ Սեդրակ Մանդինեան, քաղաքական բժիշկ Եփրեմ Տ. Գասպարեան, և այլք և 4-5 ալ ոստիկանութեան զինուորներ, թող որ ոչինչ չեն կարողացել գտնել, տան տիրոջ զոքանչն այս դէպքին վրայ՝ մի աստիճան կ'ամաչէ և դող կ'ելնէ, որ յանկարծ մարելով կը հիւանդանայ և երթալով հիւանդութիւնն ալ ծանրանալու վրայ է եղեր. մինչդեռ տեղւոյն պաշտօնական բժիշկը իւր պարտաւորեալ արուեստը մի կողմ թողած կաթողիկոսին գողցուած կարծեցեալ դոյքերը փնտռելու համար, մերթ վարդապետի, մերթ եպիսկոպոսի մը, մերթ մանկավարժի մը հետ կառքով ու ֆայթոնով տունէ տուն, գիւղէ գիւղ կը պարտի։ Մի ուրիշ տուն ալ այսպէս կոխելով դեկտ. 27ին, տան տիկինը՝ որ յղի է եղեր, վախուն նայն գիշերը կը վիժէ, երախային մի թեւը դուրս ինկեր է, իսկ ամբողջ մարմինը անհնար եղեր է ողջամբ դուրս հանել, և այժմ խեղճ կինը վտանգաւոր և անյուսալի դըրութեան մէջ է եղեր, թող որ Վաղարշապատ 800 տնէ բաղկացեալ գիւղաքաղաք մը լինելով հանդերձ, ո՛չ մի ձեւնէաս և օրինաւոր բժիշկ չգտնուիր, մինչեւ իսկ մի հատ գոնէ դեղարան անգամ չը կայ։ Այ ընթերցողք թո՛ղ երեւակայեն Վաղարշապատի զարդացեալ և քաղաքակրթեալ վիճակը։ Վերջապէս Վաղարշապատցիք կը վիրաւորեն թէ դրեթէ ամեն կաթողիկոսի մահուան առթիւ այս տեսակ խուզարկութիւնք եղած են և կը լինին. իսկ այս անդամուան նման այսպէս անխիղճ և խայտառակ խուզարկութիւն մը մինչեւ յայսօր տեսած չեն եղեր։

---

## Ա Զ Դ

### ՑՈՒՅՑ ԹՈՂ ԵՂՈՒԱՐԴ Կ. ԻՍԹԻՄԱՇԵԱՆ

Պատիւ ունի ծանուցանել յարգոյ հասարակութեան թէ ամեն օր ժամը 6էն 10 կը գտնուի Պոլիս, կամուրջին դիմացը, Ֆիւշիւքեան էֆէնտիի Դեղարանն, և հիւանդ կ'ընդունի։

Կիրակի օրերը նոյն դեղարանին մէջ ժամ 3էն 8 ձրի կը նայի աղքատաց։

Մնացեալ ժամանակները պատրաստ է հիւանդաց այցելել, կամ իւր տան մէջ ընդունիլ, ի Պէշիկթաշ, փոստա ճատտէ, թիւ 34։

---

## ԹՈՒՐՔԻԱ, ՌՈՒՍԻԱ, ՆԵՐՍԷՍ ՊԱՏՐԻԱՐՔ ԵՒ ՀԱՅ ԱԶԳԸ

—•—

## ԹՂԹԱԿՑՈՒԹԻՒՆ

### Ի ՌՈՒՍԻՈՅ

—==—

(Մեր յատուկ թղթակցէն)

——

(Շար. եւ վերջ Մոսգուայի նամակին)

Հայոց ապստամբութեան լուրերը անհաւատալի են մեզ համար, զի անհասկնալի են։ Եթէ ճիշդ է իրողութիւնը, այն ժամանակ կ'ընդունիմ որ «ասոյգ է և այն թէ «օտար մատ է խառն» այդ գործում, ինչպէս գրեցին նոյն ինք Ռուս թերթերը, և հասկնալի է թէ այդ «օտար մատը» ոչ Հայոց և ոչ Թուրքիային բարեկամ է։ Արդ «օտար ձեռը» կարեւոր համարեց շարժիլ և շարժել ճիշդ այն ժամանակ երբ Հայ ազգն սկսաւ տօնել իւր բաղձանաց կատարման սկիզբը և ամենամեծ համակրութիւն ցուցնել առ վեհ. Սուլթանն. այն ժամանակ՝ երբ հարկ էր դժոխային հնարներ գործադրել վեհ. Սուլթանին համոզել տալու թէ Հայ ազգն անարժան է նորա բարձր վստահութեան և հովանաւորութեան։

Սակայն յուսամք թէ այդ դժոխային մեքենականութիւնները անխնայ «դաւադրութիւնները» չեն խախտել այն դաշնակցութեան փըրկարար գործը զոր յղացած է վեհ. Սուլթանն, և զոր իրագործելու անհրաժեշտութեան որոշումն արած է նա ըստ ամենայնի։

Ի հարկէ մեք բնաւ չեմք զարմանար եթէ դանուած են ազգայնիտ ոմանք որ խաբեպատիր յոյսերով և խոստումներով յափշտակուած այն «օտար ձեռաց» կոյր գործի և խաղալիկ են դարձած։ Ողորմելի Հայեր միշտ սարուկ են օտար ազգաց և միշտ իրենք են իրենց սեփական ձեռամբ կործանած ազգային ամեն փրկարար շինութիւն։

Եթէ յիրաւի Հայք են ապստամբող և դաւադիրներ, շատ ցաւալի է։ Բայց որովհետեւ «օտար ձեռք» կայ խառն, «Սլաւոնաց գործոց հետ կապ ունի» և մանաւանդ Հայ ազգին և նորա վեհ. Սուլթանին մէջ պաղութիւն ծագեցնելու և կապուելիք դաշնակցութիւնը խափանելու դժոխային նպատակներն ուներ դաւ, պէտք է որ վեհ. Սուլթանն իւր ողորմածութիւնն և անյիշաչարութիւնը կատարելապէս գործադրէ և բոլոր յանցաւորաց ներում տայ։ Այն ժամանակ ի դերեւ կ'ելնէ Թուրքիոյ և Հայ ազգին թշնամեաց տապալիչ և թունաւոր խորհուրդները։

* * *

Զարմանալի լուր մը նաեւ առանք. իբր թէ Ռուսաց Պոլսոյ դեսպանը բարձրագոյն Դրան հետ խորհրդակցութիւն է ունեցած Խրիմեան Հայրիկը Կաթողիկոս ընտրելու մասին, իբր թէ կաթողիկոս ընտրելու միակ իրաւունքը Հայ ազգինը չէ։ Ի հարկէ այսպիսի լուրեր զգուշութեամբ պէտք է ընդունիլ. զի շատ անգամ ճշմարտութիւնը կեղծելու կամ աղօղելու համար կը տարածուին։ Օրինակ՝ կարծիք կայ թէ Խրիմեան Հայրիկ հաճելի չպիտի լինի Ռուս կառավարութեան, զի չափազանց ազգասէր և ազատասէր է ճանչցուած։ Թերեւս անհաճոյ է, զի ընտրելի կաթողիկոսը Էջմիածնայ վեհարանում փակած չի պիտի նստի, այլ իւր ժողովրդի մէջ պարտելով և անդադար յառաջդիմութեան յորդոր կարդալով։

Ուրիշ շատ աւելի անհեթեթ լուր մ'ևս տարածուած է Հայոց մէջ. իբր թէ Պ. Եզով, երբեմն ներքին գործոց նախարարութեան, իսկ այժմ կրթութեան նախարարութեան պաշտօնատար Հայազգի փառասէր աստիճանաւորը կաթողիկոս պիտի ընտրուի, բայց թէ մեր խելացի Ռուսահպատակ Հայերն պիտի ձեռնադրեն զնա կաթողիկոս, թէ նա պիտի ինքզինք իւր սեփական ձեռամբ ընտրէ և օծէ— չգիտեմ։ Զարմանալին այն է որ այս լուրը կաթողիկոսի մահուանէ առաջ էր տարածուած հոս և այժմ։ Ախալցխայէն ստացուած մասնաւոր նամակի համեմատ, կարկասում ևս այդ լուրը կը պաշարի։ Հետաքրքրական է իմանալ ծագը է սա, թէ լուրջ դիտաւորութիւն։ Ողորմած Աստուած, լինէ՞ր և չի կարելի սպասել մեր խելակորոյս Հայերից։ Դիցուք թէ եղած է օրինակ որ աշխարհական մ'ընտրած և հետզհետէ սարկաւագ և այլն և կաթողիկոս են օծած։ Բայց միթէ այժմ պակա՞ս են մեր մէջ, այսինքն թիւրքահպատակ Հայոց բարձրաստիճան եկեղեցականաց մէջ, արժանաւորագոյն անձինք։ Ցանդգնութիւն չէ՞ արդեօք Պ. Եզովի անունը տալ մինչդեռ Հայք ունին Ներսէսի և Խրիմեան Հայրիկի նման եկեղեցականներ։ Կաթողիկոսական խնդիրը ծանր խընդիր է, Հայոց համար կենսական խնդիր է, թէեւ չունի Պոլսոյ Պատրիարքական գահոյից փայլուն դիրքը, դիւթիչ գօրութիւնը։ Մինչեւ ցարդ Էջմիածնայ վեհարանին մէջ կարծես բանտարկուած էր Դէորգ Դ.. սակայն անժխտելի ճշմարտութիւն է որ Հայ ազգի կենաց ու մահու խնդիրն այժմ Ամենայն Հայոց կաթողիկոսի ձեռաց մէջ է։ Ուստի, ընտրելի հայրենասէրը իրաւունք ունի ցաւիլ կաթողիկոսական փշալից պաշտօնը ընդունելուն համար. բայց այն երանաւէտ մխիթարութիւնը պիտի ունենայ թէ զինք գիտակցաբար Հայաստանի և Հայ ազգին համար զոհելով, մեր եկեղեցական անկարգութիւնները ջնջելով, ազգային կրթութեան գործը արագամարանօրէն յառաջ մղելով ուժգնապէս, ազգին մշտնջենաւոր երախտիքն և օրհնութիւնը պիտի վայելէ և ոչ միայն Հայոց այլ արդէն ընդհանուր ազգաց պատմութեան մէջ անմահութեան պանծալի անուն ժառանգէ։ Նոր կաթողիկոսը իրաւունք ունի ինքզինք ընտրութեան օրէն կենդանի նահատակ անուանել. բայց միթէ այդ նահատակութիւնը պանծալի անմահութեամբ վարձատրող խեղճ Հայ ազգը արժանի չէ՞ դմա։ Խօսքս չերկարելու համար, ուրիշ անգամ ուզում կը թողում այս խնդրոյ դատումը, և կը վերջացնեմ յարելով թէ ժողովուրդը Խրիմեան Հայրիկն և Ներսէս Սրբազանն արժանաւորագոյն կ'անուանէ կաթողիկոսութեան, թէ և կը ցաւի որ Ներսէս Սրբազանի ընտրութեամբ դրկանք կը պատճառէ Թուրքահպատակ ազգայնոց։

* * *

Մէկ ուրիշ զարմանալի լուր եւս. Ռուս թերթերում կարդացի իբր թէ արտասահմանեան Հայ «Արշալոյս» հաղորդած է. «Այս յունուար ամիս Ռուսիոյ, Պարսկաստանի և Հայաստանի (թիւրքական) — դիտեցէք այս պարբերութիւնը — Եպիսկոպոսունք պիտի դումարին Հայաստանեայց եկեղեցւոյ Հայրապետին Ամենասիրտ Մայր եկեղեցում, Էջմիածնում, Ամենայն Հայոց Կաթողիկոս և Պատրիարք ընտրելու համար։ Արժանահաւատ լուր կայ թէ Երեւանայ վիճակաւոր առաջնորդ արքեպիսկոպոսն պիտի ընտրեն Կաթողիկոս և Պատրիարք»։

Ըստ երեւոյթին Ռուսք տագնապի մէջ են և մեծապէս կը փափաքին և թերեւս կը ջանան անլուր հապճեպով բաղմեցնել Հայաստանեայց ազգային անկախ եկեղեցւոյ գահոյից վրայ ըստ ամենայնի հլու անձ մը։

Ռուս թերթի՝ հաղորդած լուրը մեծ զարմանք պատճառեց ասա, մանաւանդ հայ «Արշալոյս» թերթէ քաղած լինելուն համար։ Մեք կարծէինք թէ ազգային անկախ եկեղեցւոյ գլուխ և հայրապետ ընտրելը համօրէն ազգի, մանաւանդ աշխարհական մասի, անբաւնարարելի իրաւունքն ու պարտականութիւնն է։ Սխալ է մեր կարծիքը. եթէ Ռուս թերթի հաղորդած լուրին նայենք՝ պիտի ընդունինք թէ յերեւի սխալած ենք և կաթողիկոս ընտրելու իրաւունքը բուն ազգինը չէ, այլ նորա մի քանի եպիսկոպոսաց և թերեւս Ռուս կառավարութեան։ Մոռցայ ասել թէ յիշեալ լրատուղին հարկ էր համարած յիշեցնել թէ կաթողիկոսի ընտրութիւնը Ռուս կառավարութեան կողմէ վաւերացման կարօտ է։ Արդեօք այս բառերով ոսկի՞ ասելոցոյ թէ կատարեալ կախոյ ուզեց ասել . . . ։

Ռուս թերթեր Գէորգ Դ. Կաթողիկոսի մասին առհասարակ դատելիք լսուեցան, մանաւանդ յիշելով որ նորա ժամանակ ազգային ժողովրդական դպրոցներ բազմացան և ծաղկեցան, որ նորա ամենամեծ արժանեաց ապացոյցն է»։ Պատկերազարդ շաբաթաթերթի մը նաեւ նորա կենդանագիրը տուաւ, համառօտ կենսագրութեամբ հանդերձ։ Դորա մէջ յիշած էր նորա Պօլսոյ Պատրիարքական աթոռ բարձրանալը, բայց, յաւելած էր թերթը, Պօլսոյ Պատրիարքի պաշտօնը ծանր թուեց նմա, զի դա Հայ ազգի հոգեւոր և միանգամայն աշխարհական և քաղաքական գործոց դժուարին ղեկավարութիւն է, ուստի հրաժարեցաւ և Պրուսայի վիճակը քաշուեցաւ։ Կաթողիկոս լինելէն առաջ իւր օթեւան հիւր ընդունեց Ռուսաց Մեծ իշխանաց մին և մեծամեծ պատիւներ արեց նմա, ասելն։

Մինչեւ ցարդ Լորիս Մելիքով կոմսի անունը չէր լսուեր. կաւկասի անմաքս անցուդարձ անող ապրանաց փակման վերջնական վճիռը պիտի այս օրերս կայանայ Պետական խորհրդարանում, ուր ներկայ պիտի լինի և կոմս Լորիս Մելիքով։

* * *

Ռուս թերթեր կը ծանուցանեն թէ Վիէննայի Թուրքիոյ դեսպանն հերքած է այն լուրերը որք կը տարածին Հայաստանի մէջ ապստամբութիւն ծագելու մասին։ Իբր թէ Էրզրումի մէջ ոչ մի շարժում նշմարուած է և թէ բնաւ քաղաքական բնութիւն չունին այն մէկ երկու ձերբակալութիւնք որք հասարակ չարագործաց վերաբերմամբ են գործադրուած և թէ խուզարկութեանց և ձերբակալութեանց վերաբերեալ լուրերը սուտ են, զի այդպիսի իրողութիւնք տեղի չեն ունեցած։

Սակայն Ռուս թերթեր կարեւորութիւն չեն տար այս հերքման և կը պնդեն թէ «Բազմաթիւ Հայք «բանտարկուած և սարսափելի «տանջանաց են ենթարկուած. սար«սափած ժողովուրդն իբրեւ իւր «յոյսն և ապաւէնն Ռուսիոյ ընդ«հանուր հիւպատոսն ունի միայն, «և սա, Էրզրումի ընդհանուր հիւ«պատոսն, արդէն շատերը իւր հո«վանաւորութեան ներքոյ է առած։ «Այս զօրաւոր պաշտպանութեան «արդիւնաւոր պտուղներն արդէն «ստացուած են, զի Հայք այսուհետեւ Ռուսիոյ ողորմած կայսրն և նորա հեռատես կառավարութիւնը միայն փրկութեան խարիսխ կը «ճանչնան»», և այլ անտեղի խօսքեր։

Ռուս լրագիրք միշտ կը պնդեն թէ Հայք Թրքահայաստանի մէջ շատ կը հարստահարուին։ Այս Ռուս լրագրաց լեզուէն դատելով, Ռուսիոյ նպատակը Հայաստանը վերականգնել, կամ Պուլղարիոյ կամ Արեւելեան Ռումելիի ինքնօրինութիւնը տալ չէ Հայաստանի, այլ կ'ուզէ Հայոց առօրեայ վիճակը բարւոքել, և համոզուած է թէ «Թրքահայաստանը կաւկասիոյ հետ միացնելով միայն կը հասնի այս օգտակար նպատակին»։ — Դիտեցէք որ «Թրքահայաստանէն» ասելն լսկ «կաւկասիա» է Ռուսաց համար, և մեր Ռուսահայ թերթեր իսկ չեն համարձակիր «Ռուսահայաստան» բացատրութիւնը գործածել որ անդոյ է Ռուսիոյ համար։

---

## ՄԱԿԱՐ ԱՐՔԵՊԻՍԿՈՊՈՍ

### ԱՌԱՋՆՈՐԴ ՊԵՍԱՐԱՊԻՈՅ

—o—

Հայ մամլոյն հրատարակութիւններէն տեղեկանալով թէ Ռուսահայ բարձրաստիճան եկեղեցական Գեր. Մակար սրբազան ալ կաթողիկոսական գլխաւոր ընտրելեաց մին է, կը փութամ հետեւեալ կենսագրական տեղեկութիւններն հաղորդել ձեզ յիշեալ Աղքեպիսկոպոսին վրայ.

Մակար Աղքեպիսկոպոսը բնիկ Ցարմենեցի է համեստ ընտանեաց զաւակ. այս հանգամանքը բաւական է իւր ապագայ վիճակին և կացութեան ապահով և բարենշան երաշխաւորութիւն մը լինել, ինչպէս որ իրօք ալ եղած է։

Ցամենէս կարեցի Կաթուղիկոսին վերջին օրերն Էջմիածին գալով, անդ 1843ին կուսակրօնութեան կը կոչուի. իսկ Ներսէս Աշտարակեցի Կաթողիկոսէն 1853ին եպիսկոպոս կը ձեռնադրուի, այնպէս որ հանգուցեալ Գէորգ Դ. Կաթուղիկոսէն յետոյ, Հայաստանեայց եկեղեցւոյ եպիսկոպոսաց մէջ մի միայն եպիսկոպոսն է մնացած Ներսէս Ե. ի ձեռնադրած եպիսկոպոսներէն։

Մակար Աղքեպիսկոպոսը երկար ժամանակ Էջմիածնայ ժառանգաւորաց ուսումնարանին մէջ դասաւանդելով։ Այս ուսումնարանին մէջ դասաւանդեցին Գարեգին Եպիսկոպոս Սրվանձտեանց, Գարեգին Եպիսկոպոս Տրապիզոնցի, Գարեգին Եպիսկոպոս Զարիֆեան, Գարեգին Եպիսկոպոս Սեբաստացի, Գարեգին Եպիսկոպոս Ալամդարեան, Գարեգին Եպիսկոպոս Գանձակեցի, Գարեգին Եպիսկոպոս Ամասիացի, Գարեգին Եպիսկոպոս Ալեքսանդրապոլ

տութեան պաշտօն վարած է, որոյ աշակերտներն կը համարուին այսօր Սինոդական Մհսրովպ եպիսկոպոս Ումրատեան, Սարգիս վարդապետ Ց. Գասպարեան Նախկին Սինոդական և այժմ Վեհարանի վերակացու, կարապետ վարդապետ Ց. Գալստեան, Սուքիասս եպիսկոպոս Պարզեանց յայսորդ Նոր Նախիջեւանու, Հանդուցեալ Ալեքսանդեան վարդապետն եւ Հանդուցեալ Թադէոս եպիսկոպոս և Դանիել եպիսկոպոս առաջնորդ Շամախի։

Ապա Սինոդի անդամութեան և վանուց ծախսարարութեան գործուարին պաշտօնները վարած և Ներսէս Ե. Կաթողիկոսի հրամանաւ ու յանձնարարութեամբ վանքին և այլ խնդրոց վերաբերեալ քննութեանց համար բազմաթիւ տեղեր գնացած ու յաջողութեամբ վերադարձած է, և վերջապէս իւր բոլոր վարած պաշտօններու մասին դասնանակութիւն վայելելով դուրս է եկած։ Հանդուցեալ Մատթէոս Կաթողիկոսի օրով 1862 ին Ցփղիսի առաջնորդ հաստատուեցաւ, որ Ռուսիոյ Հայոց ամենէն կարեւոր առաջնորդութիւնն է, և զոր վարած է ամբողջ 14 տարի, մինչեւ 1876 թուականը։ Մակար Արքեպիսկոպոս իւր սոյն առաջնորդական պաշտօնին մէջ, բաց ի զանազան բարեկարգութիւններէ, նաեւ գլխաւոր կառավարութեան ալ ամենապրելի մարմնին լինելովն հանդերձ, 1874–75 ի միջոցներն երեւան եկած Ռուսիոյ ազգ. գպրոցական խնդրոյն մէջ, երբ կառավարութիւնը Կաթողիկոսէն յուսահատ, Սինոդին և իւրաքանչիւր առաջնորդաց կը դիմէր ազգ. վարժարանները քաղաքական իշխանութեան ձեռքն յանձնելու, մինչդեռ Աստրախանի մէջ Վեհապետեան Դէնդրդ Արքեպիսկոպոս (որ վախճանեցաւ վերջին յունիս ամսուն) ամենից առաջ կը փութար ազգ. վարժարանները տերութեան յանձնելու, զորս յետոյ Կաթողիկոսը կրկին ետ առաւ կառավարութենէն, անդին Մակար Արքեպիսկոպոս, Ցփփիսի նման փոխարքայանիստ քաղաքի և վիճակի մը մէջ՝ ազգ. գրպրոցաց գրաւումը փորձոյն դէմ գնալու թեան և յիշատակաց արժանի շահատակութեամբ մը կարող կը լինի վարժարանները գրաւման վտանգէն զերծ պահելու։

Սակայն Մակարի սոյն ազգասիրական նախանձախնդրութիւնը պատճառ կը լինի իրեն տերութենէն վայելած տէրն ու համակրանքը ո՛չ միայն նուազեցնելու, այլ և տերութեան ատելութիւնն ու թշնամութիւնը հրաւիրելու իւր վրայ։ այնպէս որ՝ երբ Այվազովսքի Դաւթիկ Արքեպիսկոպոսն Էջմիածնայ Գէորգեան ճեմարանի վերատեսուչ, միանդամայն և Ցփղիսի Առաջնորդ նշանակուելուն համար։ Մակար յօժարակամ հրաժարելով Ցփղիսի առաջնորդութենէն, 1–2 տարի Էջմիածնայ վանքին անպաշտօն կեանք մը վարելէն յետոյ՝ հուսկ ուրեմն 1878ին Պեսարապիոյ առաջնորդ կը նշանակուի և կը հաստատուի։ Անցեալ տարի երբ Ռուսիոյ կայսերթագադրութեանը մօտակայ հանդիսին՝ Հայաստանեայց հայրապետական Մայր Աթոռը ներկայացընելու համար՝ հանդուցեալ Գէորգ Դ. կաթողիկոսի կողմանէ ի Մոսկուա զայն յուղարկելու կանխահաս հաւանութիւնը կը խնդրուի յիրքունեաց, Բեգրասպուրկի կառավարութիւնն առ կաթողիկոսն ուղղած պատասխանագրոյն մէջ՝ քաղաքավարապէս կը մերժէ Մակարի երբեւ կաթողիկոսական ներկայացուցիչ յուղարկումը հանդիսին։

Բայց և այնպէս Մակար Արքեպիսկոպոս ո՛չ նուազ փութաջանութեամբ կը շարունակէ աշխատիլ իւր նոր առաջնորդական վիճակին բարեգործութեանն ու բարգաւաճմանը հոգ տանելու, այնպէս որ յիշեալ վիճակին մէջ թեմական դպրոցաց մը հաստատելու խորհուրդն յղանալով, քաղաքական իշխանութեան հանած յայտնի արգելքներու և դժուարութեանց հակառակ, այնքան կը գրէ և կը թախանձէ հանգուցեալ Գէորգ Դ. կաթողիկոսին, որ սա եւս քանի քանի անգամ թախանձանօք և ստիպմամբ գրելէն յետոյ կառավարութեան՝ վերջապէս կը յաջողի հրաման ստանալ, և անմիջապէս Մակար Արքեպիսկոպոս կը ձեռնարկէ բանալ Նոր—Նախիջեւան քաղաքին մէջ Պեսարապիոյ թեմական դպրանոցն ազգային այն մեծ շէնքին մէջ՝ որ Ռուսաց իբր գիմնազիայի ուսումնարան կը ծառայէր, և զոր Ռուսիոյ կառավարութիւնը ստիպելով թողուլ՝ իւր գիմնազիան կը փոխադրէ այլուր։

Վերջին աշնան մէջ, Նորոգ հանգուցեալ կաթողիկոսն զգալով իւր առողջական վիճակին հեղհեղեան ծանրանալը, ուզած էր մահուանէն առաջ գործէ քաշուիլ և առանձնանալ, իսկ Մայր Աթոռոյ գործերն անձեռնհաս մարդոց ձեռքը և դուցէ անիշխանական վիճակի մէջ չձգելու համար, կանխաւ փութացեր էր հանդուցեալը՝ գրել Ռուսիոյ կառավարութեան՝ զՄակար Արքեպիսկոպոսն իբրեւ խորհուրդ, զգաստ, աչալուրջ և ձեռնհաս մարդ՝ կաթողիկոսական Տեղապահ և միանդամայն Սինոդի Նախագահ հաստատելու։ Իսկ Ռուսիոյ կառավարութիւնն, ըստ իւր աւանդական քաղաքականութեան, անշուշտ չկամենալով որ Մայր Աթոռոյ տեղապահութիւնը Մակարի նման անկախ և հաստատամիտ (էնթէկը) անձի մը ձեռքը գտնուի, մանաւանդ որ ինքը արդէն հաչտ աչօք չնայիր Մակարին, անպատասխանի և առանց հետեւանաց կը թողու կաթուղիկոսին այդ առաջարկը, որոյ վրայ մի ամիս անցնելէն յետոյ՝ հանգուցեալը ստիպողական հեռագիր կ'ուղղէ Բեգրասպուրկ, Մակարի Տեղապահութիւնը հաստատուելու համար։ Իսկ սա՛ եւս անպատասխանի մնալով, երկրորդ և աւելի խիստ մի բողոքաձև հեռագիր պատրաստել կը տայ յուղարկելու առ կառավարութիւն։ Վերջին դեկտեմբերի առաջին օրերը, յորում իւր վիճակն ա՛լ աւելի ծանրանալով՝ անկարող կը դտնուի զայն ստորագրելու, ուստի և այդ վերջին հեռագիրն անգործադրելի մնալով, հուսկ ուրեմն կը վախճանի կաթողիկոսն և Մակար Արքեպիսկոպոսի տեղապահութիւնն կը մնայ առկախ կախաւելի ստոյգն անյայտ եղած։ որ թէ լինէր՝ Մայր Աթոռոյ մէջ այսօր ո՛չ կառավարութիւնը կրնար ոտքով դլխով միջամտել, և ո՛չ ալ էջմիածնայ գործերն դեռ կաթողիկոսի մահուանը վրայ մի ամիս չանցած՝ այսօրուայ ողբալի կացութեան մէջ ընկած կը լինէին։

Մակար Արքեպիսկոպոսն Հայաստանեայց եկեղեցւոյ բարձրագոյն իշխանութեան ներկայացուցիչ ամենէն տարեւոր (որ արդէն 65 տարեկան կ'լինի) և հնագոյն եպիսկոպոսն է, միանգամայն և պատկառելի ու խոհական, ծանրալուրջ և հաստատամիտ, համեստ և ուսումնական եւ կեղեցական մ'է։ բայց որ ամենէն աւելի նշանաւորն է իւր առանձնայատուկ բնաւորութեան և բարուցը մէջ՝ այն իւր վեհանձն ներողամտութիւնն ու երկիւղամիտ համբերատարութիւնն է, որով բոլոր զինքը ճանաչող աշխարհը զարմացուցած և իւր հակառակորդներն անգամ իրեն համակիր ըրած է։ Այնպէս որ իւր Ցփղիսի առաջնորդութեան միջոցին, մինչեւ իսկ զինքը կաթողիկոսին և իւր շրջակայիցը դէմ յարուցանելու և թշնամացնելու առիթներ ներկայացած են իրեն և հրապարակային գրգռութիւններ եղած, իսկ ինքը դարձեալ կատարեալ հնազանդութիւն և հպատակութիւն ցոյց տալով, լուռ կեցեր է։ զինքը գրգռողներուն պարզապէս պատասխանելով թէ «Մարդս իւր մեծաւորին կողմանէ եկածին համբերելու և տանելու է, թէ ո՛չ ուրիշ բանի՝ գոնէ տան պատուոյն համար։»

Հուսկ ուրեմն Մակար Արքեպիսկոպոս այսօրուան օրս Հայաստանեայց եկեղեցւոյ բարձրագոյն իշխանութեան դէկը վարելու կարող և ձեռնհաս ստուգիւ արժանաւոր մի բարձրաստիճան եկեղեցական է, որ եթէ չյաջողի իրեն կաթողիկոսական ընտրուելու, գէթ նորընտիր կաթուղիկոսի մը ամենէն օգտակար և ամենէն հաւատարիմ խորհրդականն և ազգու ու զօրաւոր աջակիցը արժանի է հանդիսանալու ամեն անոնց համար՝ որք գիտեն Ազգին շահն ու Մայր Աթոռոյ փառքն ու պատիւը ամեն անհատական և ինքնասիրական հաշիւներէ վեր ու բարձր վերադասել։

ՀԱՅԱՍՏԱՆՑԻ

---

## ՄԱՆԿՈՒՆԻ ԵՊԻՍԿՈՊՈՍԻ ՀԱՐՍՏՈՒԹԻՒՆԸ

Մայրաքաղաքս եկած տեղեկութեանց նայելով, Մանկունի եպիսկոպոս, որ հանգուցեալ Գէորգ Դ. Կաթողիկոսի գոյքերը գողցած և պահած լինելու ծանր ամբաստանութեամբ հսկողութեան ներքեւ կը գտնուի, բաղդ ոգիր մը տուեր է Սինոդին, յորում սա տեսակ պարբերութեամբ մը գաղափար մը կուտայ եղեր իւր անձնական ընչից վրայ։

«Յապահովութիւն Սինոդիդ՝ զի ես ոչ երբէք ներեմ ինձ խոյս տալ ի քննութեանց և յարդարութենէ, յաւելում յայտնել և զայս, զի ես — բացի արժեղղեցոց, զորս ինքնին յանձնեցի Սինոդիդ յապահովութիւն, և ընկալայ ապահովագիր, — ունիմ ի Կ. Պոլիս զդրամս, այն է, ղբեթ հարիւր հինգ հարիւր դրամ հատ (3510) Գ.ՕՆՍՕՐԻՍՈՍ Օսմանեանս և դ.յիսուն և վեց (56) արժեղեղեալքս Օսմանեան — Բուլղարի երկաթուղեաց, — որք արժեն իւրաքանչիւր վեց հազար ռուբլի ըստ հաշուոյ գնման, զորոց ունիմ և զկտակ, եթէ կանխիցէ վախճան կենաց իմոց —, և եթէ բաց ի դումարաց, ի մեծաւորս արժեղեղեալ երկաթուղեաց, մլոյ ոսկեայ տփոյ, և ի խավարեալ նուիրելոց ի Նորին Սրբութենէ ի լուսահոգի Հայրապետէ, աղքատ և թշուառ քեռն իւրում հարազատի, երբ և ինչ հաստատեսցի յիմ վերայ, կամ ի վերայ Պ. Ստեփանիկի Տէր Մարգեանց, կամ ի վերայ ծառայից Վեհարանի, գողութիւն կամ յափշտակութիւն ինչ, սկըսեալ ի մլոյ ռուբլւոյ կամ յոսկւոյ ցհազարաւորս, նոյնպէս յարծաթեղինաց, և յոսկեղինաց, և յայլոց, ի սեփական կայից և ի դոյից բազմերախտ և բազմարդիւն լուսահոգի Հայրապետի ազգիս, պատրաստ եմ տուժել զտանապատիկն գողելոց կամ յափշտակելոց։»

---

## ԹՂԹԱԿՑՈՒԹԻՒՆ

### Ի ՓՈՔՐ ԱՍԻՈՑ

(Մեր թղթակցէն)

Եօզդատ 1882 դեկտ. 18/30

Անցեալ հինգշաբթի ժամանեց աստ քաղաքիս նորընտիր կառավարիչ Վեհմ. Հասան փաշա։ Նորին Վեհմութիւնը դիմաւորած էին Ցանկի եւ Քրիստոնեայ ազնուականք եւ կառավարական անդամք։ Նորին Վեհմութիւնն նախ կառավարական խորհրդարանն իջնելով պաշտօնապէս հայտնեց կայսերական հրովարտակի բովանդակութիւնն եւ ապա հիւրընկալեցաւ Թուրք ազնուականի մը ապարանքը, ուր ընդունեց պաշտօնական այցելութիւններ։

* * *

Արդէն կեսարիոյ ազգամութեան ողբալի վիճակն գրած էինք անտի, եւ երբ հոս եկանք՝ աստ եւս գրեթէ նոյն եւ նման էր, ամեն բան երեսի վրայ եւ կործանման ատիճանի հասած։ Բայց Սրբազան Ամենայն Ներսէս եպիսկոպոսի Կայսերական հրամանաւ յամառ Պատրիարքութեան վերադառնալն ոգեւորեց համայն ազգայնս։ Այս ուրախալից լրոյն յանկարծական փոփոխութիւնն լրոյը ազգայնոց սրտերուն հասաւ եւ լեզուարական արագութեամբ, եւ ամենայն ոք սկսաւ օրհնել եւ սքանչացեալ երկար կեանք մաղթել Ն. Կ. Վեհափառութեան։ Այս առթիւ՝ ըստ Պատրիարքական հրամանի Վեհ. Սուլթանի եւ Ցանն Օսմանեան բարձրութեանն համար յատուկ աղօթքներ եւ մաղթանքներ ըլլալու համար ի մասնաւորի հրաւիրեցան Ն. Վսեմութիւնն Հասան բաշա, նախկին Կառավարիչ Հատի բաշա եւ Տերվիշ պէյ էֆէնտի յեկեղեցին։ Խուռն բազմութիւն մը դիմած էր անդ. Ղեւոնդ եպիսկոպոս նախ քարոզ մը տալով թուեց հարիւրաւոր տարիներէ ի վեր Հայ ազգին առ Օսմ. Տերութիւնն մատուցած հաւատարմութիւնն եւ Օսմ. Սուլթանաց առ ազգն չնորհած բարեբարութիւնն եւ ապա երկար կեանք եւ բարօրութիւն մաղթեց Վեհ. Սուլթանին, Բարձր. Սայիտ բաշայի, Կառավարիչ Վսեմ. Հասան բաշայի. ապա Տիրացու Ցակոբ Ղեւոնդ Սրբազանի փոքրաւորը նոյն իմաստով երկայն ճառ մը կարդաց, եւ յետոյ երգեցիկ մանկանց հանդիսին յարմար երգերովը այս սքանչառուչ եւ վեհմ հանդիսին վերջ արուեցաւ։ Այս առթիւ կը շնորհաւորենք գերջանիկ վերադարձ Ն. Սրբազնութեան յամառ Պատրիարքութեան եւ երկնից ողորմութիւնը կը հայցենք իւր դժուար պաշտօնին յաջողութեանն համար։

* * *

Ազգ. կուսակցութիւնք՝ Ղեւոնդեանք եւ հակաղեւոնդեանք՝ լոկն կը գործեն։ Ղեւոնդ եպիսկոպոս անցեալին ցաւալի յիշատակներն մոռցնելու կը ձգտի եւ բժշկուած կ'երեւի. ուստի մեք եւս յաջողութիւնք կը մաղթենք իւր բարեսէր ձեռնարկութեան։ այսուհետեւ խաբուիլ կը լսենք. սակէ առաջ քարոզներն հակառակ կուսակցութեան վրայ անէծք եւ նզովք տեղալն էր։ Անցեալներն հակաղեւոնդեանց մէկ հարսանեաց պատճառաւ հանդիսաւոր պատարագ մատոյց, եւ խօսած քարոզին մէջ զբոլորեսին լուսոյ մէջ պակեցուց եւ յաւիտենական երջանկութիւն եւ արքայութիւն մաղթեց...

Բայց դաստիարակութեան խնդիրին բնաւ կարգ չի գար. դպրոցներն այսօր խիստ խեղճ վիճակի մէջ են, վարժապետներէն ոմանք՝ տարեկան եւ վեցամսեայ վարձքերնին առած չեն։ Խեղճ քահանայից թոչակն եւ. այսպէս է, այնպէս զի, բոլորեքին միանալով եկեղեցիներն եւ դպրոցներն գոցելու անգամ սպառնացած են. բայց մտածելով որ մէկուն հոգը պիտի ՆԵԼԼՍ, այս քարէ դիտաւորութենէն յետս կասած են։

* * *

Կառավարութեան փորձառու պաշտօնեայ մը՝ գաղթականաց ժողովին նախկին անդամ՝ անցեալին խօսակցութեան մէջ կ'ըսեր թէ «Զերքէսներն այս երկիրն ոտք կոխած օրէն խաղաղութիւնն իւր վերջին հրաժեշտը տուաւ»։ Այս գաղթականներն, հակառակ Բոսմէլիի գաղթականաց գործունէութեան եւ հաւատարմութեան, միշտ սովորած են առանց քրտինքի հաց ուտել։ Սոցա տուներն՝ որք գեղանփոր քարայրներ կամ խոռոչներ են, պատուական գորգերով եւ կապերտներով եւ այլ զարդերով կահաւորեալ են, որք միշտ օտարին վատակածէն իրենց առած Ղանֆէն էր։ Իսկ Բոսմէլիի գաղթականք նախանձելի օրինակ մը եղած են, մինչեւ անգամ տեղացւոց, որք քաղաքաց հաղորդակցութեանն կը ծառայեն կառքերով։ Վերջերս այդ Զերքէս մահճակալներու ըրածներուն չափը անցած է. թողով այն գովելի գործքերնին որ է ճանապարհորդներն կողոպտել, կը յանդգնին նաեւ բուն իսկ քաղաքիս մէջ դիւրերայն առուները մանելով զինու զօրութեամբ գործ տեսնել, ինչպէս որ մօտերս Պողազլայանի տեղական տիկիր էֆֆի առուը մանելով ամեն չարագործութիւն բրած եւ 160 ոսկւոյ արժողութեամբ հանդերձեղէն Շարած են 12 հոգի։

Բաց ասոնք, 10 զինեալ աւազակք Սամանի եւ Կեսարիոյ ճամբուն վրայ ապահովութիւնն խռոված են բոլորովին. վերջերս կարաւան մը կողոպտած են, բայց կառավարութեան կողմէն ղբրկուած հեծելք կողոպտուին մէկ մասն յաջողած են կորզել։ Քանի մ'ամիս առաջ Բող. ազգայնոց ժողովարանն եւ երկու մզկիթներ կողոպտուած էին. կողոպտիչներն այս անգամ Զիլէ ձեռք բերուած եւ գողերն ձերբակալուած են։ սոքա երեք հոգի են, մին տեղացի եւ երկուքն Սարայցի. առոնցմէ մին մատնած է ընկերներն, իւր իրաւունքը ղանպնուն համար. այժմ բանտեալ են աստ. կը յուսացուի որ, գողտներն կրնան հանուիլ եթէ քննութիւնն չարունակուի։

* * *

Դասալիք զինուոր մը ի բաղմաց հետէ քաղաքիս բոլորտիքն խումբեր ժողովելով ժողովուրդն առ'ու գողի մէջ ձգած էր։ Կառավարութեան կողմանէ հեծեալ զապթիէներ կը զրկուին, որք կաղդարարեն անձնատուր լինել, բայց աւաղակապետն վառոդով պատասխան կուտայ եւ կը վիրաւորէ հեծելոց մին։ Հեծեալք հրացաններն կը պարպեն եւ կը սատկեցնեն զայն, եւ այսպէս ժողովուրդն մեծ փորձանքէ մը կազատեն։ Այս բանիս մէջ կը գովին մանաւանդ զապթիէ Ալի աղայի արիութիւնը։ Կը յուսամք որ կառավարիչ Հասան բաշայի արիւն հակոզութեան չնորհիւ հետզհետէ խաղաղութիւնն ու ապահովութիւնը կը վերահաստատուի։

* * *

Սունկարլուի ազգայինք մեծ եւ անփոխարինելի կորուստ մը ունեցած են։ Մեծ. Սարգիս էֆ. Նարլեան յետ կարճատեւ հիւանդութեան իւր մահկանացուն կնքած է ի հասակի 40 ամաց։ Հանդուցեալն ազգասէր եւ բարի դիտաւորութեանց հետ նաեւ պատուարժանութիւն լինելով, ինքն պատճառ եղած է եւ չարժառիթ Սունկարլուի ազգայի դպրոցաց այժմու նախանձելի վիճակին, եւ Սանուց ընկերութեան վերահաստատութեանն եւ յարատեւութեան։ Սորա մահուամբ ազգն ընտիր անհատ մը կորուսած է։

(Մնացեալն յաջորդ թուով)

---

## ԽՄԲԱԳԻՐ–ՏՆՕՐԷՆ

Կ. Ս. ԻԹԻԹՃԵԱՆ

---

## Ա. Զ Դ

Տոքթոր Մ. Բ. Իւթիւճեանի հրատարակած ՄԱՏԵՆԱԳԱՐԱՆ ԺՈՂՈՎՐԴԵԱՆ անուն օգտակար տետրակներուն երկրորդ շրջանի հինգ

---

# ԹԵՐԹՈՒՆ ՄԱԼՍԱՒ

(18)

ԷՍՄՈՆ ԱՊՈՒ

## ԱՄՈՒՍՆՈՒԹԻՒՆՔ ՓԱՐԻԶԻ

ՄԱՐԳԻԶՈՒՀԻՈՅՆ ՄԱՅՐԸ

4

որ աչնան վերջին Ժպիտներուն ժամանակ ծիրանաւոր դէն կ'ատանայ, իրենց չաղապատուն ոտերը մինչեւ տանիքը հանած էին։ Լայնասիրտ վոլիբիլներ կը ծաղկէին դրան առջեւ, և կոբենիներու կապոյտ բոժոժը բոլոր պատուհանները կը զարդարէր։

Այս տեսարանն Ադոլֆի ամենաբաղդ յիշատակներն արթնցուց մարքիզուհւոյն մտքին մէջ. որ նոյն միջոցին ձրիապէս կուտար իւր Սէն–Ջոմինիք փողոցի ապարանն և այն փոքրիկ ու նեղ պարտէզն, ուր ծաղիկները կը խեղդուէին տանը ծանր ստուերէն և հիւսուրց չագանակենիներուն թանձրախիտ տերեւներէն։ Պարզ բեհեղէ շրջազգեստ մը, հեռադտեանդրոնների թաւուտի մը մէջ կէս ծածկուած, յանկարծ կորզեց զայն իւր մտախոհութենէն. Լիւսիլ վազեց տիկին Ժորտէի թեւերուն մէջ ինկաւ։

Թատրոնի մէջ գիտած էք երբեք Ովրեստի և Պիլադի հանդիպումը։ Ո՛րչափ և ճարտար լինին դերասանք, այս տեսարանը քիչ մը ծաղրաչարժ է. վասն զի արանց բարեկամութիւնն ի բնէ ոչ դիւրահաղորդ է և ոչ շնորհալից։ Ջեռաց կոչտ սեղմումը, թեւի մ'ամբեթի կերպով պարանոցի մը շուրջը ձգուին, ուր երկու մարմիններու անտեղի շփումն աչք դմայլեցնելու կարող նիւթեր չեն։ Ո՛րչափ վայելչագեղ է կանանց դրութիւն, և ո՛րչափ մեծ դերասաններ են բարեկամութեան մէջ՝ ամենէն համբոյրներն իսկ։

Սէլին փոքրիկ խարտեաշ մ'էր, գեր ու կլոր, լայն ճակատով, ցցուեալ քիթով, ամեն առթիւ իւր սպիտակ ու սուր ատամունքը ցուցնող, ապրելու երջանկութենէն գատ ուրիշ պատճառ մը չունենալով ծիծաղող, առանց վշտի լացող, մէկ ժամու մէջ քսան անգամ դէմքը փոխող, և միշտ հաճելի՝ առանց երբէք պատճառը բացատրել կարելի լինելու։ Այս ճշմարիտ վէպը պատմողին բարերադդութենէն՝ գեղեցկութիւնը դիւրաւ սահմանուելիք բան մը չէ. վասն զի անհնար պիտի լիներ ինձ ըսել թէ ինչ տեսակ գեղեցկութեամբ օրիորդ Մէլիէ հրապուրած էր իւր այրն և ամեն զինքը տեսնողները։ Մասնաւոր կերպիւ գեղեցիկ բան մը չունէր, եթէ ոչ հասակին կլորութիւնն, իւր կէս իրանին կատարելութիւնը, գոյնին պայծառութիւնն, և այտին վրայի երկու փոքրիկ ու սիրուն փոսիկներն, որք սակայն բաղձացեալ կանոնաւորութիւնը չունէին։

Լիւսիլ բնաւ չէր նմաներ Տիկին Ժորտիի։ Եթէ բարեկամութիւնն հակադիպութենէ կ'սպրի, առանց ալ բարեկամութիւնն յաւիտենական պարտ էր լինել։ Դեռատի մարքիզուհին՝ աւելի բարձր հասակ և նըւազ գիրութիւն ունէր քան զիւր բարեկամուհին։ Արդէն ըսած եմ թէ իւր մանկամարդութիւնն ուշ բացուած ծաղիկ մ'էր։ Երեւակայեցէք որսորդ Անահիտի նիհար և ջղոտ գեղեցկութիւնը։ Ցեսա՞ծ էք երբեմն Պ. Քորոյի սքանչելի գիւղանկարներուն մէջ այն բարձր և թեթեւ հասակով յաւերժահարսներն, որք իրարու ձեռքէ բռնած պար կը բոլորեն յաղթ ծառերու ներքեւ։ Եթէ Ովթրըվիլ մարքիզուհին երբեմն այն պարին մասնակցէր, առանց թիկնոցէ մը զատ ուրիշ հանդերձ՝ և մարդերուն մէջ ոսկի նետ մը զատ ուրիշ զլխաղարդ ունենալու, կենդանի շըջանակը բացուելով զայն կ'ընդունէր, և պարը նորէն կը շարունակէր՝ քոյր մ'աւելի ունենալով։

Դիպուածին մէկ քմահաճութեամբն, Արլանժի անտառներուն թագուհին այն առաւօտ ճերմակ ֆոռէֆէ փեղոյր և վարդագոյն Բոֆրոյէ շրջազգեստ հագած էր, իսկ փոքրիկ և խարտեաշ քաղաքացուհին՝ անտառաց բնակչի մը պէս յարդէ փեղոյր և լայն գիշերազգեստ մը հագած էր։

— Ո՞րչափ բարեսիրտ ես հոս գալուդ համար, ըսաւ մարքիզուհւոյն։

Ընթերցողը չպահանջեն ինձմէ որ երկու բարեկամուհեաց խօսքերն ընդհատող համբոյրները մի՛ առ մի նշանակեմ։

— Քեզ երազեր էի, գեղեցի՛կդ իմ, ո՞րչափ ժամանակ է որ փարիզ էք։

— Ամուսնութեանս հետեւեալ օրէն ի վեր։

— Ցանուհինդ աւուր կորուստ մ'ինձ համար. բայց սոսկալի բան է այդ։

— Եթէ ուր լինիդ գիտնայի՝, մրմնջեց դեռատի մարքիզուհին։ Շատ պէտք ունէի քեզ տեսնելու։

— Ես ալ նոյնպէս։ Նախ երկու աչացդ մէջ տեղէն նայէ ինձ. տիկնոջ մը դէմքն ունի՞մ։ Զիս տակաւին օրիորդ պիտի կոչե՞ն։

— Ճշմարիտ է. աւելի վատահ բան մը կայ ձեր վրայ, աւելի լուրջ դէմքի մը . . .

— Ադկէց անդին մի՛ անցնիր, որ խնդալէն չճաթիմ։ Եւ դո՞ւ, նայի՛նք. միշտ նոյնն ես։ Բարի լոյս, օրիո՛րդ։

— Ձեր խոնարհ աղախինը, տիկի՛ն։

— Տիկի՛ն. է՞նչ ազուոր բառ։ Եթէ նախաճաշին ժամանակ խելօք կենաք, ձեզ տիկին պիտի կոչեմ պատուղ կերած ժամանակնիս։ Կը յիշե՞ս այն ժամանակն ուր տիկնոջ խաղ կը խաղայինք։

— Շատ հին բան չէ որ մոռնամ։

— Եկէք, օրիո՛րդ, պատցնեմ ձեզ պարտէզիս մէջ։ Ծաղիկներուն չդպչիս։»

Այսպէս խօսած միջոցին վարդերու մեծ ոստ մը բրցուց, որուն եռին ամբողջապէս աներեւոյթ կը լինէր։

— Շնորհ կը խնդրեմ գեղեցիկ պարտէզիդ համար գոչեց Լիւսիլ։

— Նախ չեմ ուզեր որ «գեղեցիկ պարտէզդ» ըսես։ Ամեն մարդ կը տեսնէ, ամեն մարդ կուգայ հոս, ամենուն պարտէզն է այս։ Իմ գեղեցիկ պարտէզս հոն է, սա պատին ետին։ Երկու հոգի միայն կը պտըտի հոն։ Ռոպէր և ես. դու ալ երրորդ կը լինիս։ Եկ. կը տեսնե՞ս սա կանանչ դուռը։ Նայինք ո՛վ յառաջ կը հասնի հոն։»

Եւ սկսաւ վազել, Լիւսիլ ալ ետեւէն, և շուտով անցաւ զայն։ Տիկին Ժորտի, գրան քով հանելուն պէս, դրպանէն փոքրիկ բանալի մը հանելով բացաւ։

— Այս մեր պահեստի պարտէզն է։ Այս թմբիներն, որոց ծաղիկները թեւեր ունին, մեզ համար միայն կը ծաղկին։ Մեք հոս թեւ թեւի առանձին կը պտըտինք ամեն առաւօտ, աշխատութեան ժամէն առաջ, վասն զի մեք առաւօտեան թռչուններ ենք. Արքայութիւնս սովորութիւններս պահած եմ. իսկ Ռոպէր, չեմ գիտեր ինչպէս կ'ընէ, ո՛րչափ կանուխ արթընցնամ, կը տեսնեմ որ արմուկովը բարձին կրթնած՝ իմ քնանալս կը դիտէ լրջաբար։ Քիչ մ'այս կողմ ելէ. հին տէրն հոս քարանձաւոր մեծ աւազան մը չինել տուեր էր, գալարաձեւերով ու խեցիներով ծեփուած, մէջ տեղը դաճէ Ապողոնով մը և բազում դորտերով։ Ռոպէր քակել տուաւ անոր երեք չորրորդ մասն և օդ ու լոյս բերաւ հոս։ Ինքը տնկեց այս շաղապատուն տունկերը, կախեց այս համակները, զետեղեց այս գեղեցիկ սեղանն ու թիկնաթոռները։ Հրեշտակի պէս ճաշակ ունի, ճարտարապետ է, յարդարիչ է, պարտիզպան է, ամենայն ինչ է։ Նստէ քիչ մը սա մամուռին վրայ։ Բայց ոչ, ոչ, մուռցայ նոր շրջազգեստ հագած լինիդ։ Ես այս կը հագնիմ ամեն առաւօտ, և կրնամ ամեն տեղ նստիլ։ Երթա՞նք։

— Ոչ դեռ. ես կը սիրեմ նստիլ այս գեղեցիկ ծառերուն տակ։

(Շարունակելի)

La publicité de l'etranger est exclusivement remise à l'Eastern Agency, Constantinople Karaekuy Déirmen Han

գերորդ հատորն, որ առտնին տընտեսութեան վրայ կը խօսի, հրատարակուեցաւ այս շաբթու։

## ԱԶԴ

վախճանեալ մեծանուն Լէոն կամպէթայի վիմագիր պատկերը կը Ֆախուի կամուրջին վրայ լրագրավաճառաց քով. գին 4 ղրուշ։

## ԻԼԱՆ

Նիղամիէ երգաք անպարը իշուն չէրի օն պէշէր պին գըյէսի թէպիմ օլունմագ իւղրէ միւպայաա թրունաճագ օլան 90,000 գըյէ թրիէսատ թօրպա չէքերինին չէրայիթի մուգարրէրէսի վէճճ իւէ պէշէր գըյէ ի ճէտիտի սիմ Մէճիտիէ տօգուզ ղրուշա օլարագ իւչ ղրուշ օթուզ սէքիզ փարայա թալիպի էօհտէսինտէ օյուպ, իշպու քանունի սանինին 26ՆԴ չէարշէնպիհ կիւնի պիլ միւնագասա գարարը գաթիսի վէրիլէճէյինտէն, վէ 27ՆԴ բէնշշէնպիհ կիւնու թէքարրիւր իտէճէք ֆիյաթատան եիւզտէ պէշ թէնգիլի գապուլ գըլընաճալընտան, իմայէ թալիպ օյանլարընն լէվազիմաթը ումումիէ տայրէսինէ կէլմէլերի։

## ՖՐԻՏ, ԼԻՅԼԱՆՏ

ՇՈԳԵՆԱՒԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹԵԱՆ

ԱՌԱՋԻՆ ԿԱՐԳԻ ՇՈԳԵՆԱՒՈՒ

Որ կանոնաւորապէս կը բանի Լիվերբուլ և Աբերտին ծովը։

| Անուանք | Թոնոյ | Անուանք | Թոնոյ |
|---|---|---|---|
| Աֆրիկան | 2,500 | Ֆավնին | 3,700 |
| Աւստրալիա | 2,500 | Ֆլորինտա | 3,700 |
| Անգլոսաքսան | 2,500 | Ֆլորիտա | 3,700 |
| Ամերիկա | 2,500 | Իսպերիան | 5,500 |
| Արաբիան | 3,700 | Իւլիսէյան | 5,500 |
| Պալմիրան | 6,000 | Խարբիան | 5,500 |
| Պալտիմոր | 6,000 | Լէսպիան | 2,200 |
| Քասթիլիան | 800 | Լիվերբուլ | 2,500 |
| Սայրինա | 2,000 | Լիսպոն | 800 |
| Տորս | 700 | Օքսֆորդ | 700 |
| Էմիրէյթ | 3,700 | Բէրլին | 3,800 |
| Ֆապիան | 3,700 | Վալինիան | 6,800 |
| Ֆալէրմոն | 3,700 | Վիրջինիան | 6,800 |

Շաբաթական շոգենաւներու նոր գիծ մը հաստատեցաւ Լիվերբուլի եւ Պոսդընի միջեւ, եւ ստորագրեալս հեղուկէ զատ ուրիշ վաճառք կ'ընդունի օրինաւոր սակագներով։

Ուղեւորներու համար ամեն դիւրութիւն կ'ընծայուի։

Աւելի մանրամասնութեանց համար դիմել առ ԷՏՈՒԱՐՏ ԼԱՖՈՆԴԷՆ
Գործակալ
թիւ 34, 35, 36, Էէնի Միսէթ խան, Ղալաթիա

Նաւատեարք, Պարոնայք Ֆրէտ, Էվլանտ եւ ընկ. Լիվերբուլ

Գործակալներ՝
Կ. Պոլիս, Էտուարտ Լաֆոնդէն.
Զմիւռնիա, Պ. Պ. Քարվըր եղբարք.
Ալեքսանդրիա, Կ. Լ. Վանման եւ ընկ.
Մալթա, Ա. Քամիլերի.
Շիրա, Ա. Մ. Մավրոկօրտատոյ.
Զմիւռնիա, Պ. Ուիդոլ եւ ընկ.

## ՄՈՍ

ՇՈԳԵՆԱՒԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹԵԱՆ

ԼԻՎԷՐՊՈՒԼԻ ԵՒ ՄԻՆՔԷՐԷՐՈՒՆԻ ՄԷՋ ԲԱՆԵԼ ԾԷՆՈՒՆՔ

| Անուանք | Թոնոյ | Անուանք | Թոնոյ |
|---|---|---|---|
| Քանբրա | 4,200 | Ուէրէ | 3,000 |
| Ֆրա | 4,000 | Նէբրիս | 3 000 |
| Օմանի | 4,000 | Բէր | 3,000 |
| Սէսսէքս | 3,250 | Իսի | 2,600 |
| Թէդ | 3,250 | Ադլանդէ | 1,700 |
| Մոկոալ | 3,250 | Լոդէ | 800 |
| Նէր | 3,250 | Օքսֆորդ | 800 |
| Մարէ օրէ | 3,250 | Սէռէլ | 750 |

Ադլանդէ շոգենաւը, նաւապետ Սգիւրրդ, Լիվերբուլէն կը հանի դէպ ի 30 ներկայ ամսոյ։

Վերոյիշեալ շոգենաւք չգեղապէս յարգարուած են ճանապարհներու համար։ Դիմել առ Ժ. Թ. ՈՒԻԹՈՒԼ եւ ԸՆԿ.
Գործակատար
Մէյտանկրդ սոգագ, Պոլիս
կամ առ Պ. ՆԷՎԻՅԼ Է. ՄԱԼԹԱՍ
թիւ 1 եւ 3, Նարլեան խան,
Վոյվոտա փողոց, Ղալաթա.

Ցնօրէնութիւն, Լիվերբուլ,
ՃԷՅՄՍ ՄՈՍ եւ ԸՆԿ.
31, Ճէյմս Սդրիդ, Լիվերբուլ.

Գործակատարներ՝

| | |
|---|---|
| Ալեքսանդրիա | Ռ. Ճ. Մոս եւ Ընկ. |
| Պէյրութ | Ց. Բաթիթարաքի |
| Կ. Պոլիս | Ց. Վ. Ուիթոլ եւ Ընկ. |
| Դարդանէլ | Ֆրանք Քալվէրթ |
| Ճիպրալթար | Սմիթ, Իսոս եւ Ընկ. |
| Մալթա | Սմիթ եւ Ընկ. |
| Խաքէնտերուն | Լէվի, Ֆրանք եւ Ընկ. |
| Զմիւռնիա | Պ. Ռ. Ուիթալ եւ Ընկ. |
| Շիրա | Ն. Ռ. Բէդրոքուլոյ |

## ՔԻԻՆԱՐՏ

ՇՈԳԵՆԱՒԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹԵԱՆ

ԱՌԱՋԻՆ ԿԱՐԳԻ ՇՈԳԵՆԱՒՈՒ

Որ ամբողջ տարի մանրամասն կը բանի Լիվերբուլ և Մինքերիական ծովը։

| Անուանք | Թոնոյ | Անուանք | Թոնոյ |
|---|---|---|---|
| Օրանիա | 7,000 | Մալտա | 3,000 |
| Ադրիա | 3,000 | Մորատոս | 2,500 |
| Ալբերտ | 3,000 | Նանի | 2,500 |
| Պորնիա | 4,600 | Բուենոս | 5,000 |
| Պոնտիա | 3,800 | Բորնիա | 3.200 |
| Պալմիրա | 2,500 | Բուլթրա | 3,000 |
| Պրինս Քոնրատ | 1,200 | Սերվիա | 7,800 |
| Սենգալիա | 5,000 | Սիրիա | 4,600 |
| Քարթագենիա | 4,700 | Սարտինիա | 3,000 |
| Շերբուրգ | 2,000 | Սամարիա | 3,000 |
| Տեքսաս | 2,500 | Սիրոն | 3,000 |
| Կուլիա | 4,000 | Թարիգա | 3,000 |
| Քեոսը | 2,500 | Թրինիդադ | 2,500 |
| Մարոնա | 3,000 | | |

Մորատոս շոգենաւը, նաւապետ Պրաուն գալ շաբթու կ'սպասուի Լիվերբուլէն։

Սաորագրեալս արտօնութիւն ունի ճանապարհ եւ վաճառք ընդունիլ Նիւ Եորքի եւ Պոսդընի, ինչպէս նաեւ Միացեալ-Նահանգաց ուրիշ կողմերուն համար՝ օրինաւոր սակագներով։

Դիմել առ
ԹՈՄԱՍ Զ. ՃՈԼԻ, Գործակատար.
թիւ 1 Քիւչիւք Հալվի փաշա խան
Ղալաթիա։

Ցնօրէնք ընկերութեան
ՊԸՐՆՍ ԵՒ ՄԱՔԻՎԸՐ
1, Ռըմֆորտ Սթ. Լիվերբուլ։

# ԴՐԱՄԱԿԱՆ

### ՂԱԼԱԹԻՈՅ ՊՈՐՍԱ

Ղալաթիա 19 յունվ.

ԸՆԹԱՑՔ ՓՈԽԱՆԱԿՈՒԹԵԱՆ
(Օսմ. ոսկին 100 ղրուշի հաշուով)

| | |
|---|---|
| Լոնտրա 5 ամիս, ղրշ. | 110 3/4 առ. Ա. Ղ. լիր |
| Փարիզ 5 » Ֆր. | 42,70 առ. Օսմ. լիր |

ԸՆԹԱՑՔ ԱՐԺԵԹՂԹՈՑ

| | |
|---|---|
| Օսմ. գանձ. գլուխ (դ. կ.) | 12,24 |
| բաղուեցաւ | 12,24 |
| ելեւ օրին | 12,24 |
| Եգիպտ. միաց. բաց. ոսկի | 73,20 Ա. Ղ. լիր |
| Սօսիէթէ Ֆէնէրալ 6 0/0 | 5.15 |
| » Օթօման | 4, |
| Կ. Գրոսոյ Պանքան | 9, |
| Քրէտի Ֆէնէրալ 6 0/0 Օսմ. լիր | 6, |
| Ֆրանկ. 1865 (Մուրթոն) 6 0/0 Ֆր. | 73 |
| » 1865 » 6 0/0 | 71, |
| » 1869 (Բինար) 6 0/0 | 65, |
| » 1872 (Պոն տիւ Թրէզոր) | 23.50 |
| » 1873 (Բինար) 6 0/0 | 58 50 |
| Ռումէլիի երկաթուղի | 55, |
| Լաւրիոմ (գ. կ.) | 165, |
| Պրուսիաս Օսմ. լիր | 345, |
| Թղթադրամ » | 910 |
| Հէտիւլէ սիզ | 20 |
| Բիլիար | — |

ԸՆԹԱՑՔ ԴՐԱՄՈՑ
(Օսմ. ոսկին 100 ղրշէն) Ղրշ.

| | |
|---|---|
| Անգղիական ոսկի | 110 22 |
| Գաղղիական » | 88 |
| Բոլ | 90 12 |
| Գրիմից | 51 25 |
| Գաւառաց թուղթ (գաբիթ) | 921 |
| » արծաթ (նոր) | 90 30 |
| Մէճիտիէ տարբերութիւն | 108 7 |
| Վենոց | 104 20 |
| Լինգոց | 104 |
| Մէթալիք | 102 |

### ԵՒՐՈՊԱԿԱՆ ՊՈՐՍԱ

Լոնտրա 30 յունվ.

| | |
|---|---|
| Անգղ. գոնս. | 102 5/32 |
| Օսմ. » | 11 3/8 |
| Փոխ. 1865 | 13 1/4 |
| » 1869 | 12 1/4 |
| » 1871 | 71 1/2 |
| » 1872 | 22 3/4 |
| » 1873 | 11 1/8 |
| » 1877 | 83 1/4 |
| Պանք Օթոման | 18 1/8 |
| Ռուս. փոխ. 75ի | 82 3/4 |
| Եգիպտ. միացեալ | 70 |
| » արտաքնաւոր | 92 1/4 |
| Տայրա Սանիէ | 70 1/4 |
| Փոխ. Ռօշիլտ | 99 1/4 |
| Թուրքական փարիզի վրայ | 25,15 |

Փարիզ 30 յունվ.

| | |
|---|---|
| Գաղղ. գոնս. 3 0/0 | 115 12,50 |
| » » 5 0/0 | 78 25, |
| Օսմ. գոնս. | 11.40 |
| Փոխ. 1865 | Ֆր. |
| » 1869 | 60 |
| » 1873 | 55 |
| Օսմ. երկաթուղի | 52, |
| Պանք Օթոման | գ. կ. 707,50 |
| Քրէտի Լիոնէ | գ. կ. 560. |
| Ռուս. փոխ. 5 0/0 (1877) | 89, |
| » » Արեւելեան | — |
| Իտալ. գոնս. | 86,35 |
| Եգիպտ. միացեալ | 352,50 |
| Թուրքական Լոնտ. վրայ | 25.19 |

Վիէննա 30 յունվ

| | |
|---|---|
| Փոխ. Լոնտրայի վրայ | 120.05 |
| Ռումէլիի երկաթուղի | 24,50 |

ԿԷՍ ՕՐ 6,35

Աշխարհի զարմանալիքը։
Համաշխարհային Մազի Նորոգիչը.

## ՏԻԿԻՆ Ս. Ե. ԸԼԼԷՆԻ

Իրաւունք ինքն իսկ գերածայր կատարելութիւն, որով եմն անգամ որ ուզուի կրնայ մազերը իրենց առջի գեղեցկութեանը դարձուիլ ու իրենց թարմ գոյնին ու փայլին վերածուիլ։ Կընորոգէ մազերուն կենդանութիւնը, ոյժը և աճումը ու։ Ծուռով մկդի կ'ընէ թեփը։ Ընտանի նորոգիչ է մազերու, և բուրումը զմայլելի և առատ։ Գլխաւոր մթերանոցը (114 and 116, Southampton Row). Լոնտոն է Նոյնպէս Խարիզ ու Նիու Եօրք։ Կըվաճառուի ամեն սափրիչներու, անոյշ իւղագործներու և անգղիացի դեղագործներու քով։





ՀԱՐԱՒԱՆԵԿԱՆ ԾՈՒՂԿԱՓՈՒՆՋ.
ԳԵՂԵՑԿԱՑՈՒՆԵԼՈՒ ՄԱՐՄՆՈՅ ԳՈՅՆԸ
ՄԻՇՏ ԾԱՂԿԱՓԹԻ, ՄԻՇՏ ԹԱՐՄ։

Մի՛ակ փորձ մը բաւ է համոզել ամեն Տիկին որ այս ծաղկները կը գերազանցեն ուրիշ որ և է ջուր երեսի փոշի։ Վրանի մը վայրկեանի մէջ երեսի, վզի, թեւերու և ձեռքերու քնքուշ փափկութիւն և մարմարիոնի ճերմկութիւն, հանդերձ լքլքի և վարդի անոյշ գունոնի ու հոտով։ Մէկդի կ'ընէ թեփը, երեսի ցանը արևայրուքը, և ամեն բրտութիւն և բիծ։ Գլխաւոր մթերանոցը Լոնտոն է (114 and 116, Southampton Row). Նոյնպէս Խարիզ ու Նիու Եօրք։ Կըվաճառուի սափրիչներու, անոյշ իւղագործներու և անգղիացի դեղագործներու քով։

★ ★

ԿԵԱՆՔ ԱՃՈՒՄՆ և ԳԵՂ ՄԱԶԵՐՈՒ։

## ՄԻԼԼՐՈՅ

ՄԱԶԵՐՈՒ ՄԷԿ ՀԱՏԻԿ ՆՈՐՈԳԻՉ.

Իր մէջը կը բովանդակէ ամեն յատկութիւնն որով առատ մազ մը, որ "Ինութեան գեղեցիկ Պսակն" է, կընայ պահպանուիլ ու նորոգուիլ։ Մէլրոզը ներկ չէ։ Մէլրոզ գործածէ, երբ որ մազերու դէմ ճերմակ իյնայ կամ ճերմկին։ Մէլրոզ գործածէ, երբ որ մազերդ սկսին թափիլ և կամ երբ որ թեփոտին։ Կը վաճառուի երկու չափ շիշով, ամեն դեղագործներու քով և անոյշ իւղագործներու։ Գլխաւոր մթերանոցը Լոնտոն է (114, Southampton Row). Նոյնպէս Խարիզ ու Նիու Եօրք։

☞ Տիկին Ս. Ե. Ընլլէնի "Համաշխարհային Մազի Նորոգիչ" "Հարսանեկան Ծաղկափունջը" և "Մէլրոզ Մազերու Նորոգիչը" կը վաճառուին։

Կ. Պոլիս Ս. Քանղիւք եղբարց քով, Ֆարմասի Պրիթանիք Բերա Մեծ փողոց և Լամբնտ Քարիւհնայի քով, Անգլիական մթերանոց, Եիւքսէք Գալաթրրամ Ղալաթիա։




| | | |
|---|---|---|
| Քօսթիւմ արանց համար | 80 | ղրշ.էն |
| » երիտասարդաց » | 40 | » |
| » տղոց համար | 30 | » |
| Բանթալօն արանց | 14 | » |
| » երիտասարդաց | 10 | » |
| Ժիլէ արանց համար | 12 | » |
| Սաքօ » » | 40 | » |
| Ճաքէթ » » | 60 | » |
| Ռէդինկոթ » | 80 | » |
| Բառուբսի » | 80 | » |
| » երիտասարդաց հմր | 40 | » |
| Ռօպ տը շամպրը | 80 | » |

ՕՄԷՐԼԱՖԷՆՏԻ ԽԱՆ
Կ. ՊՕԼԻՍ

Վերոգրեալ դիներն արդէն ամամլնելով սակարկութիւն չկայ։ Այս վաճառատան մէջ տղայոց համար ամեն տեսակ դիմացկուն եւ ընտիր զգեստեղէնք կը գտնուին. գնողք կը վկայեն զգեստեղինաց լաւութեան եւ դիմացկութեան։ Զմրան համար յատկապէս բերել տրուած են ընտիր եւ դիմացկուն բանթալոններ, ժիլէներ, սաքոներ եւ ամեն տեսակ զգեստեղէնք. յաճախորդք գոհ կը լինին ոչ միայն ապրանաց լաւութենէն եւ դիմացկունութենէն, այլ եւ գնոց ժամանութենէն։



Այս տեսակ կարի մեքենաներ որոնք խիստ պարզ եւ յարմար են ընտանեաց համար, նաեւ (Հատ) եւ (Տէվէ) կոչուած մեքենաներ թէ զերձակաց եւ թէ կոշկարաց յարմար տեսակներէն եւ մեքենայի համար յատուկ շինուած իւղ որ բնաւ չաւոր եւ զայն իւր բնական փայլուն վիճակին մէջ կը պահէ, ժամանակին կը ծախուին կարին ձիկէրճեան եւ ընկերաց Ամերիկայի վաճառատունը։

Վաճառատունս մէջ կը գտնուին նաեւ զանազան վաճառք, նոյնպէս նոր եկած («ինկր) կարի մեքենաներ եւ մեքենայից վերաբերեալ ամեն գործիքներ, որոնք դիւրամատչելի գիներով կը տրուին յաճախորդաց։

Ինչպէս իւղաքաթիս, նոյնպէս ուրիշ տեղերէ լինելիք յանձնարարութեանց օրինաւորապէս եւ ամենայն ճշտութեամբ կատարուելու փորձերը շատերը տեսնելով գոհ եղած են. նոյնը կը շարունակուի ասկէ վերջ դարձեալ։

Կարին ձիկէրճեան եւ ընկերաց Ամերիկայի վաճառատունը թիւ 156 եկեղեցւոյ դուռ։

Աչերի Վիկօրը եղական դարման է հերաց ամեն տեսակ դժուարութեանց և սոյն եղատակին համար ծախուած ուրիշ բաղադրութիւններէ առաւել գոհ կընէ գործածողները։

Մանաւանդ իւգական սեռի գործածութեանը համար անհրաժեշտ է այս, քանզի՝ կառատացնէ ու մեռաքսանման փայլուն և կակուղ կընէ գլխու կարծը մազը։ Որև է պատճառաւ գունաթափ եղածը անվրէպ իր նախկին գոյնին կը վերադարձնէ. անյշնէ եթէ արմատը փճացած չէ (քանզի բնութեան մէջ ոչինչ կահաստատ մազը կը վերահաստատէ, Դափաձին տեղ նոր մազ կը բուսրող է մազ բուսցնել երբ արմատը փտած է), գլխուն ճերմակ թեփը շուտով կանհետացնէ։ Միով բանիւ բնական ու փայլուն մազի առատութեամբ գլխոյն զարդարուելովը՝ գործածողը խիստ վայելչադէմ կերպարանք մը կստանայ։ Մայրաքաղաքիս մէջ և այլ տեղեր բազմաթիւ գործածողք այսպէս կը վկայեն։ Անուշահոտ ջուր մ'է, չիշը կանանչ թուղթի մէջ ամփոփեալ է. դեղավաճառք և այլ շատեր կը ծախեն։ Այէրի Վիկօրը հարցնել պէտք է։ Գլխաւոր տեղին է Մինասեանի Ամերիկեան վաճառատունը ի Ղալաթիա Կոստանդնուպօլսոյ։

VICHY

## ՎԻՇԻ

PASTILLES DIGESTIVES. — Վիշիի աղբիւրներէն հանուած աղերէն շինուած։ Այս բաթիլներն ախորժահամ են և ստամոքսի թթուութեանց և դժուարամարսութեանց դէմ շատ ազդու։

SEL DE VICHY POUR BAINS. — Բաղնիքի համար ծրար մը աղ բաւական է այն անձանց համար որք Վիշի չեն, կարող երթալ։

Կեղծերէն զգուշանալու համար պէտք է ԲԱՆԵՑՈՂ ԸՆԿԵՐՈՒԹԵԱՆ դրոշմը բոլոր արտադրութեանց վրայ փնտռել։

Ամեն դեղագործաց և դեղավաճառաց քով կը գտնուի։



## ՇԻՐՔԻԹԻ ԽԱՑՐԻԷԻ

ՇՈԳԵՆԱՒՆԵՐՈՒՆ ԵՐԹԵՒԵԿԻ ԺԱՄԵՐԸ

1883 ՅՈՒՆՎԱՐ 1 ՇԱԲԱԹ ՕՐԷՆ ՍԿՍԵԱԼ

ՄԻՆՉԵՒ ՅՈՒՆՎ. 31

ԲՈՍՓՈՐԷՆ ԻՋՆՈՂ ՇՈԳԵՆԱՒՆԵՐԸ

| Ժամ | | |
|---|---|---|
| | Եւրոպական Եղանակ | |
| 2 | Եէնի մահալլէն Մէզարպուրնու, Պէյիւքտէրէ, Թարապիա, Եէնիք (Եէնիգիւղի շոգենաւին հետ պիտի հաղորդակցի։) | 19 |
| 2 35 | Եէնիքէյ. Սթէնեա. Էմիրկ. Պայանքէյ. Ր. Հիսար. Պէպէք. (Արնաւուտգիւղի շոգենաւին հետ պիտի հաղորդակցի։) | 18 |
| 3 | Ր. և Ա. Գավագ. Եէնիմահալլէ. Մէզարպ. Պէյիւքտ. Թարապ. Եէնիք. (Եէնիգիւղի շոգենաւին հետ պիտի հաղորդակցի։) | 20 |
| 3 50 | Եէնիք. Սթէն. Էմիրկ. Պայանք. Ր. Հիսար. Պէպէք. (Պէպէքի շոգենաւին հետ պիտի հաղորդակցի) | 25 |
| 4 30 | Եէնիմահ. Մէզարպ. Պէյիւքտ. Թարապիա. Եէնիք. Սթէն. Էմիրկ. Պայանք. Ր. Հիսար. Պէպէք. Արնավ. Գուր. Օրթաք. Պէշիկ։ | 32 |
| 7 | Եէնիմահ. Մէզարպ. Պէյիւքտ. Թարապ. Պէյքօզ, Բաշապ. Եէնիք. Էմիրկ. Գանլ. Ա. եւ Ր. Հիսար, Գանտ. Արնավ. Զէնկ. Պէյլէր. Օրթաք Գուզկ. Պէշիկ. Իսկ։ | 4 |
| 8 15 | Ա. և Ր. Գավագ Եէնիմահ. Մէզարպ. Պէյիւքտ. Թարապ. Պէյքօզ, Եէնիք. Էմիրկ. Պայանքք Ր. Հիսար. Պէպէք. Արնավ. Գուրուչ. Օրթաքէյ. Պէշիկթ. (Ուրբաթ օրերը Սթէնեա) | 20 |
| 10 | Մէզարպուրնուէն Պէյիւքտէրէ. Թարապ. Եէնիք. Էմիրկ. Ր. Հիսար, Արնավ. Օրթաք. Պէշիկթ։ | 28 |
| | Արնաւուտ գեղ | |
| 2 | Պէպէք, Արնաւուտք. Գուր. Օրթաք. Պէշիկ։ | 32 |
| 2 45 | Արնավ. Գուր. Օրթաք. Պէշիկթաշ։ | 4 |
| 3 15 | Պէպէք, Արնավ. Գուր. Օրթաք. Պէշիկթաշ Գապաթաշ։ | 23 |
| 4 | Արնաւուտք. Գուր. Օրթաք. Պէշիկթաշ։ | 18 |
| 4 30 | Պէպէք, Արնավ. Գուր. Օրթաք. Պէշիկթաշ, Գապաթաշ։ | 19 |
| 10 35 | Պէպէքէն ուղղակի կամուրջ։ | 19 |
| | Աւուտան Եղանակ | |
| 1 45 | Վանիք. Զէնկ. Պէյլ. Գուզկ. Գապաթ. | 25 |
| 2 15 | Պէյքօզ, Բաշապ. Ր Փ. մահալլէ, Գանլրճա, Ա. Հիսար, Գանարլի (Գանարլիի շոգենաւին հետ պիտի հաղորդակցի)։ | 23 |
| 2 30 | Գանտ. Վանիք. Զէնկ. Պէյլ. Գուզկ. Իսկ. (Երկուշաբթի օրերը Իսկիւտար չպիտի հանդիպի։) | 1 |
| 3 30 | Պէյիւքտ. Թարապ. Պէյքօզ, Բաշապ. Գանլ. Ա. Հիսար, Գանտ. (Գանարլի շոգենաւին հետ պիտի հաղորդակցի։) Ուրբաթ օրերը Վանիք. Զէնկ. Պէյլ. Գուզկ. Իսկ. | 17 |
| 3 30 | Գանտ. Վանիք. Զէնկ. Պէյլ. Գուզկ. Գապաթաշ։ | 21 |
| 4 30 | Գանտ. Վանիք. Զէնկ. Պէյլ. Գուզկ. Իսկ. (Բացի ուրբաթէ)։ | 23 |
| 8 45 | Պէյիւքտ. Պէյքօզ, Բաշապ. Գանլ. Ա. Հիսար, Գանտ. Վանիք. Զէնկ. Պէյլ. Գուզկ. Իսկիւտար։ (Ուրբաթ օրերը Ր. փաշա մահ.) | 21 |
| 10 25 | Վանիքէյէն ուղղակի կամուրջ։ | 23 |

ԿԱՄՈՒՐՋԷՆ ԵԼՆՈՂ ՇՈԳԵՆԱՒՆԵՐԸ

| | | |
|---|---|---|
| | Եւրոպական Եղանակ | |
| 3 | Պէշիկթաշ. Օրթաք. Արնավ. Ր. Հիսար, Էմիրկ. Եէնիք. Թարապ. Պէյիւքտ. Եէնիմահ. | 32 |
| 43 45 | Գապաթաշ, Իսկ. Պէշիկթաշ, Գուզկ. Օրթաք. Պէյլ. Զէնկ. Արնավ. Գանտ. Ա. եւ Ր. Հիսար, Գանլ. Էմիրկ. Եէնիք. Բաշապ Պէյքօզ, Թարապ. Պէյիւքտ. Մէզարպ. Եէնիմահ. | 4 |
| 5 30 | Գապաթաշ, Պէշիկ Օրթաք. Գուրուչ. Արնավ. Պէպէք, Ր. Հիսար, Պոյաճ. Էմիրկ. Սթէն. Եէնիք. Պէյքօզ, Թարապ. Պէյիւքտ. Մէզարպ. Եէնիմ. Հ. Գավագլար։ | 20 |
| 6 45 | Իսկիւտար, Պէշիկ. Գուզկ. Օրթաք. Պէյլ. Զէնկ. Արնավ. Գանտ. Ր. Հիսար, Գանլ. Էմիրկ. Եէնիք. Թարապ. Պէյիւքտ։ | 21 |
| 8 30 | Պէշիկ. Օրթաք. Արնավ. Պէպէք, Ր. Հիսար, Էմիրկ. Եէնիք. Թարապ. Մէզարպ. Պէյիւքտէրէ։ | 23 |
| 10 30 | Պէպէք, Ր. Հիսար, Պոյաճ. Էմիրկ. Սթէն, Եէնիք. Թարապ. Պէյիւքտ. Մէզարպ. Եէնիմահ։ | 18 |
| 11 10 | Եէնիք. Թարապ. Պէյիւքտ. Մէզարպ. Եէնիմահ։ | 20 |
| 11 25 | Պէպէք, Ր. Հիսար, Պոյաճ. Էմիրկ. Սթէն. Եէնիք։ | 19 |
| | Աւուտան Եղանակ | |
| 3 30 | Ուղղակի Արնավ. | 18 |
| 4 | » Պէպէք։ | 19 |
| 9 50 | Պէշիկթաշ, Օրթաք. Գուր. Արնավ. Պէպէք, (Վոսփորի շոգենաւին հետ պիտի հաղորդակցի։) | 19 |
| 10 35 | Պէշիկթաշ, Գուզկ. Պէյլ. Զէնկ. Գուր. Արնավ. | 4 |
| 11 5 | Գապաթաշ, Պէշիկ. Օրթաք. Գուր. Արնավ. Պէպէք (Եէնիքէյի շոգենաւին հետ պիտի հաղորդակցի)։ | 1 |
| 11 40 | Պէշիկթաշ, Օրթաք. Գուրուչ. Արնավ. Պէպէք։ | 23 |
| 12 | Պէշիկթաշ, Օրթաք. Գուրուչ. Արնավ. | 25 |
| | Աւուտան Եղանակ | |
| 2 45 | Իսկիւտար, Գուզկ. Պէյլ. Զէնկ. Գանտ. Ա. Հիսար, Գանլ. Եէնիք. | 25 |
| 3 45 | Ուղղակի Գանարլի (Բացի ուրբաթէ)։ | |
| 9 40 | Գուզկ. Պէյլ. Զէնկ. Վանիք. (Գավաքի շոգենաւին հետ պիտի հաղորդակցի։) | 23 |
| 10 15 | Օրթաք Վանիք. Գանտ. Ա. Հիսար, Գանլ. Բաշապ. Պէյքօզ Մէզարպ. Ր. և Ա. Գավագ։ | 17 |
| 10 50 | Իսկ. Գուզկ. Պէյլ. Զէնկ. Վանիք. Գանտ. (Պէյքօզի շոգենաւին հետ պիտի հաղորդակցի)։ | 21 |
| 11 10 | Գանտ. Ա. Հիսար, Գանլճա Ր. փ. մահ. Բաշապ. Պէյքօզ։ | 23 |
| 11 40 | Գապաթաշ, Գուզկ. Պէյլ. Զէնկ. Վանիք։ | 32 |

Ուրբաթ օրերը ժամ 4 1/4ին շոգենաւ մը կամուրջէն ելնելով Իսկիւտար, Գուզկ. Պէյլ. Զէնկ. Վանիք. Գանտ. Ա. Հիսար, Գանլ. Ր. փ. մահ. Բաշապ. հանդիպելով Պէյքօզ պիտի երթայ, եւ ժամ 5 3/4ին Պէյքօզէն պիտի ելնէ Եէնիք. Էմիրկ. Գանլ. Ր. Հիսար, Գանտ. Արնավ. Պէյլ. Օրթաք. Պէշիկթաշ Իսկ. հանդիպելով կամուրջ պիտի վերադառնայ։